




Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՕԳԸՅԻՆ, ԲԸՆԸՍԻՐԸԿԸՆ, ԳԻՐԸԴԻՏԸԿԸՆ
ԵՒ ԴԸՂԸԲԸԿԸՆ



ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐԶԸՆ ՄԻՐՄԵԸՅ



ՅԵՐՈՒՍԸՂԻՄ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՄՐԲՈՑ ՅԱԿՈՎԵԼԱՆՑ

1871



ՎԵՅԵՐՈՐԴ ՏՎԻ
ԹԻՒ 11.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՆՈՅԵՄԲԵՐ 30.
1871.

Ա. Զ. Գ. Ս. Յ. Ի. Ն., Բ. Ա. Ն. Ս. Ս. Ի. Բ. Ա. Կ. Ա. Ն. Ե. Ի. Գ. Բ. Ա. Գ. Ի. Տ. Ա. Կ. Ա. Ն.

Կ Տ Ա Կ Ս Գ Ի Ր

ԲԱՐԵՀԱՄԲԱԻ ՅԱԿՈԲ ԷՖԷՆՏԻ ԱՇԸԴԵԱՆ ԿԵՍԱՐԱՅԻՈՅ

Երբ մարդոց գործը կը խօսի, լեզուին և գրչին խօսելու շատ բաժին չը մնար։ Վասն զի առաքինի գործը առաւել պերճախօս է քան թէ լեզուն և գրիչը։ Առաքինի գործը ազդեցութիւն և տպաւորութիւն ունի նաեւ այնպիսի մտքերու և սրտերու վրայ, զորս չարժեւոր և համոզելու համար բաւական չեն շատ անգամ լեզուի և գրչի բովանդակ ուժգնութիւնն ու զօրութիւնը։ Իսկ գործն եւս այնչափ աւելի պերճախօս է և աւելի համոզիչ, որչափ մեծ է իւր նպատակը, մեծ է իւր արդիւնքը և անմահ է իւր անւորութիւնը։ Այսպիսի բարենը

պատակ մեծագործութեանց մէջ իրաւամբ առաջին տեղին կը գրաւեն այնպիսիները, որոնք, զանազան ժամանակ, զանազան անձանց ձեռքով կատարուած են և կը կատարուին ընդհանրութեան օգտի համար, սրտի և մտքի մշակութիւնը հանրացնելու համար, լոյսը և գիտութիւնը ծաւալելու համար, միով բանիւ, դատաւարակութիւնը և կրթութիւնը քաջաբերելու համար։

Ինչպէս ուրիշ ազգաց, նոյնպէս մեր Ազգին մէջ եւս, եղած են և կան մեծագործ անձինք, որոց արտքը և անունը օրհնութեամբ կը յիշուին և

կը քարոզուին, և ահա այսպիսի սրկաբարձործ անձանց դատակարգին կը պատկանի Ալքեան Սեծ. Յակոբ էֆէնտին իւր զուարթ առատաձեռնութեամբ և իւր բարենպատակ Ալքախֆրով:

Ս. Աթուս, որ համօրէն Ալքի ամենաինձ պարծանքներէն մին է, շատ անգամ և շատ կարօտութեանց մէջ տեսած և վայելած է Սեծ. Յակոբ էֆէնտին բարեպաշտութեան և ազգասիրութեան արգիւնքները, և ահա այս անգամ զուարթ սրտիւ և ջերմագին օրհնութեամբ կ'ընդունի նորա ազգաշահ Կոսկադիրը՝ կտակեալ գումարով հանդերձ, յօգուտ յառանգաւորաց Վարժարանի, ի յառաջագիմութիւն հայասեռ մանկուոյն:

Կոսկադրէն արդէն իւրաքանչիւր որ կարող է տեսնել և ճանաչել Սեծ. Կոսկարարի գեղեցիկ բաղձանքն ու նպատակը. վասն զի ամեն կտակ՝ կը տակողի կամաց և փափաքանաց յայտագիրնէ: Աստուածաշունչ մատեանն ինքնին Կոսկարան կը կոչուի, աստուածային կամաց և բարութեանց բովանդակիչ լինելոյն համար: Այսպէս են, ի մասնաւորի, և մարդկանց Կոսկաքիրները, որոնք իրենց դիտաւորութեան և ըղձից պատկերն են: Ի՞նչ է Սեծ. Յակոբ էֆէնտին իղձը: — Հայ մանկուոյն բարոյական և մտաւոր զարգացումը: Սեծ է արդարեւ սոյն իղձը, սքանչելի է այս փափաքը, և ահա սոյն փափաքը իրաքոյձելու եւ արգիւնաւորելու համար է, որ կը կտակէ և կ'աւանդէ մեծանունն Ալքեան իւր քրտանց արդար վաստակոյ մի մասը Ս. Աթուս յառանգաւորաց Վարժարանին, ուր զանազան դաստնէրէ հայ մանուկներ կ'ուսանին: Օրհնեալ լինին ամենքը, որոնք այսպէս սրտի և մտքի մշակութեան կը նուիրեն իրենց նիւթական և բարոյական քիրտն ու վաստակը:

Սեծ. Յակոբ էֆէնտին, քանի անգամ որ Արուստղէմ եկած է, միշտ գովելի յիշատակներ թողած է Ս. Աթուս մէջ, այսպէս է նա ամեն տեղ իւր առատաձեռնութեամբ և ողորմածութեամբ: Նա այն անձինքներէն է, որոնք ուր որ շրջին, ինչ տեղէ որ անցնին, ծաղիկներ կը բուսնին իրենց հետքերուն տեղը: Այս բարեգործ Հայազգին, քանի մի ամիս մնալով Ս. Աթուս մէջ, իւր բարեպաշտական տուրքերով Սխաբանութիւնը միւլթարելէն, իւր այցելութիւններով Վարժարանի յառանգաւորները քաջալերելէն և իւր անմահ Կոսկը աւանդելէն զինի, իւր ուղեւորութեան օրը վերստին այցելութեան եկաւ ի Վարժարան Ս. Պատրիարքի հետ միասին, և իւր խրախոյսները տալով և մատաղերամ մանկանց երախտագիտական գոհութիւնը և շնորհակալութիւնը ընդունելով՝ վերադարձաւ յԱլէքսանդրիա, ուղեկցութեամբ Ս. Պատրիարքին մինչեւ ի Յոպպէ: Վերադարձաւ նա, բայց մնաց իւր մեծագործութիւնն, որ դարուց ի դարս պիտի քարոզուի:

Արդ՝ քաղցր պարտք կը համարիմք հրատարակել, յուրախութիւն մեր ազնեից, թէ՛ Սեծ. Ալքեանի Ալքախֆիրը, թէ՛ Ս. Աթուս կտակաւորութեան խոստմնագիրը և թէ՛ ի դիմաց յառանգաւորաց կարգացուած փոքրիկ ճառը:

Արդ՝ քաղցր պարտք կը համարիմք հրատարակել, յուրախութիւն մեր ազնեից, թէ՛ Սեծ. Ալքեանի Ալքախֆիրը, թէ՛ Ս. Աթուս կտակաւորութեան խոստմնագիրը և թէ՛ ի դիմաց յառանգաւորաց կարգացուած փոքրիկ ճառը:

ՅԱՆՈՒՆ ՀՕԲ ԵՒ ՈՐԴՒՈՅ ԵՒ ՀՈԳՒՈՅՆ
ՍՐԲՈՅ, ԱՄԷՆ

Եւս ստորագրեալս՝ Սահտեսի Յա-
կովը, Ալքեան տոհմէն, բնիկ Կեսա-
րիոյ թալաւ գիւղացի, և այժմ բնա-
կիչ Աղէքսանդրիոյ, մահկանացու ը-
լալս գիտնալով և առ Ազգն իմ ունե-
ցած պարտաւորութիւնս ճանչնալով,
ինքնայորդոր և յօժար կամօքս ու
խորհրդովս Կտակաւ կըթողում Սուրբ
Երուստղէմի Դառանգաւորաց Վար-
ժարանի յառաջագիմութեան համար
Երկր- հաշար վեց հարիւր յիսուս եւ ին
ոսի (2657) :

Իմ փափաքս և նպատակս, երկար
ժամանակէն ՚ի վեր Ազգիս հաստա-
տուն բարիք մը ընել՝ և նուիրական
պարտքս կատարել ըլլալով, Կտակիս
արդիւնաւորութեան և յարատեւու-
թեան համար, զայն հետեւեալ պայ-
մաններու վրայ կը հաստատեմ և կը
հիմնեմ :

Ա. — Իմ կամքս է, որ իմ կտակած
գումարէն Երկր- հաշար Օսմանեան ոսկին
իբրեւ մայր գումար և դրամագլուխ
ամենեւին չը պիտի պակսի, այլ միշտ
օրինաւոր շահեցողութեան մէջ պէտք
է մնայ : Իսկ մնացեալ 657 ոսկի գու-
մարէն ՚ի բաց հանելով Ս. Աթոռոյն
Տպարանին կցուած մասին նորոգու-
թեան և ընդարձակութեան ծախքը՝
274 ոսկի, որ իմ հաճութեամբ և գի-
տութեամբ եղած է, մնացեալ 383
ոսկին և ընդ նմին բուն դրամագլխոյն
ներկայ տարւոյս (՚ի 12էն Յուլիսի 1871
ց 12 Յուլիսի 1872 ամի) շահը՝ 200
ոսկի, ընդ ամենն 583 ոսկի առ ձեռն
պատրաստի գումարն արդէն իսկ ՚ի
գործ դնել և շահաբեր շինուածքներ
կառուցանել յօգուտ Դառանգաւոր-
աց Վարժարանի Ս. Յակովբեանց :

Բ. — Իմ կամքս է, որ 2000 ոսկի գը-
րամագլխոյն բերած տարեկան 200 ոս-
կի շահով շարունակաբար նորանոր
շէնքեր շինուին, և նորակառոյց շին-
ւածոց բերած տարեկան եկամուտով
Թէ հարկ եղած ժամանակ շէնքերը
նորոգուին, Թէ Վարժարանի ամենա-
կարեւոր պէտքերը հագացուին և Թէ
շարունակ օգտակար գրքեր տպուին
Սուրբ Աթոռոյն Տպարանին մէջ, և
դարձեալ նոյն գրեանց արդիւնքը մի
միայն նոյն Վարժարանի պայծառու-
թեան և յառաջագիմութեան հա-
մար գործածուի և ոչ ուրիշ որ և իցէ
բանի :

Գ. — Կը կամիմ և կը պարտաւո-
րեմ միանգամայն, որ Սուրբ Աթոռը
ամենայն օրինաւորութեամբ և հա-
ւատարմութեամբ գործադրելով իմ
Կտակս, արդիւնաւորէ և բեղմնաւորէ,
որպէս զի տարուէ տարի Վարժարա-
նին արդիւնքն աւելնայ և ապագայի
մէջ Վարժարանը, ըստ նախնական նը-
պատակին և ըստ հիմնական կանոնին,
կարող ըլլայ Հայաստանի գաւառ-
ներուն մէջ ալ նորանոր ճիւղեր ու-
նենալ :

Դ. — Կը կամիմ որ իմ այս Կտակիս
արդիւնքով Վարժարանին օգտին հա-
մար տպուած գրքերուն ամեն մէկուն
ճակտին վրայ իմ ազգատոհմիս անու-
նը գրողմուի, ՚ի յաւիտենական յի-
շատակ կենդանեաց և ննջեցելոց մեր
Ալքեան տոհմին :

Ե. — Իմ սոյն Կտակիս օրինաւոր
գործադրութեան և անխափան ար-
դիւնաւորութեան համար Կտակս
կատար կը կարգեմ Սուրբ Երուսա-
ղէմի սրբոց Յակովբեանց Առաքելա-
կան Ս. Աթոռոյն ներկայ Եւսայի Պատ-
րիարք Արքաղան Արքեպիսկոպոսը,
ապագայ իւր Յաջորդները, ներկայ
Տնօրէն Դոզմլը և իւր Յաջորդները,

Դպրոցի ներկայ և ապագայ Տեսչութիւնը, միով բանիւ նոյն Վանքի համայն անձնուէր և հաւատարիմ միաբանական Ուխտը, որք պարտաւոր են հարկաւորապէս հսկել իմ Կոտակի անթերի գործադրութեանը ամենայն արթնութեամբ, և ամեն տարի օրինակոր և կարգաւոր արձանագրութեամբ հաշիւ տալ ինձ, իմ ժառանգներուն և Ազգեան տոհմի մերձաւոր աղջականներուն ։

2. - Զանուէն արդարութեան և հաւատարմութեան՝ առաջի Աստուծոյ և համայն Հայ աղգութեան կը պարտաւորեմ իմ Կոտակապատարներս, այսինքն Սրբոց Յակովբեանց Վանուց ներկայ և ապագայ Սրբազան Պատրիարքները, Եպիսկոպոսները, Դպրոցի Տեսչութիւնները և բոլոր միաբանական Ուխտը, որ ՚ի սէր Աստուծոյ, և յագուտ Ազգին, Զանան, աշխատին ամենայն սիրով և հաւատարմութեամբ գործադրել իմ Կոտակա բուն իմ կուսաց և նպատակիս համաձայն, որ է միմիայն իմ Ազգիս մանկանց մտաւոր և բարոյական բարգաւաճումը ։ Կը պարտաւորեմ զիրենք, որ բնաւ իրաւունք չունենան իմ նպատակէս ու պայմաններէս խոտորիլ և ուրիշ բանի գործածել զայն ։ Իսկ եթէ, զբժբազդաբար ըլլայ որ, որ և իցէ ժամանակ չեղին այս իմ Կոտակիս նպատակէն, որ չեմ յուսար, այժմէն թէ իմ ժառանգներս և թէ բոլոր Հայ աղգութիւնը դատաստաղ կը կարգեմ որ միմիայն այսպիսի զանցառութեան կամ պարտազանցութեան դէպքերու մէջ իրաւամբ հսկեն իմ սոյն Կոտակա բուն իմ նպատակիս գործադրելու համար ։

Այս է իմ երկարժամանակեայ փափագս, աղտաւ կամքս և ինքնայոժար որոշումս, իմ երկար խորհելովս, առ

ռողջ և ըւրջ դատողութեամբս այսպէս որոշեցի և կը հաստատեմ ջերմեռանդն սիրով, ուստի իմ ժառանգներս կամ աղջականներս բնաւ իրաւունք չունին իմ այս ինքնայոժար Կըտակի խափանել և իմ նուիրական կամքս բռնաբարել, մոնաւանդ թէ իրենք ալ պարտաւոր են հաստատութեանը և յարատեւութեանը նպատակէ բանիւ և արդեամբ, վասն զի այս իմ սեպհական իրաւունքս է և աշխատանացս ու քրտանցս արդիւնքն, զոր ես մարդկային պարտքս ճանչնալով սիրով և յօժարութեամբս կոտակելով կը նուիրեմ յօգուտ Ժառանգաւորաց Վարժարանին Ս. Երուսաղէմի ։ Գոհ եմ Աստուծոյմէ, շնորհակալ եմ իւր առատ պարգեւէն, որ արդիւնաւորած է իմ աշխատանքս, և ահա ես ալ յօժար կամօքս, մըտաց և սրտի ինքնախորհուրդ համալմամբս և ուրախ հոգւով նոյն աշխատանացս արդիւնքէն մասն կը հանեմ իմ սիրելի Ազգիս մանկանց կրթութեան և դատաւարակութեան համար ։

Ուստի ահա կենդանութեանս տետենս, մարմնոյ և մտաց առողջ ժամանակիս, հասուն խորհրդովս գրեցի, կը ստորագրեմ, կը կնքեմ և կը հաստատեմ սոյն Կոտակս, իմ խոխական ձեռամբս և կնքովս ։

Յակոբ Ազգեան ։

12 Օգոս. 1871.

Երեսասղէմ ։

Ղրեցան Կէնդ օրինալ, յորոց Ֆէն Ռի գրասի Դ Պարիսարարանի, Դ Խորհրդարանի, Դ Եկեղեցւոյ, Դ Վարժարանի և առ Բարեպաշտ Կոտակարան ։

ԻՄԵԾԱՊԱՏԻՒ ՅԱԿՈԲ ԷՖԵՆՏԻ ԱՇԼԳԵԱՆ

ԲԻՍՏՈՍԱՍԵՐ ԵՒ ԲԱՐԵՐԱՐ ՏԵՐ

Չեր աստուածասէր և բարեպաշտ ոգւոյն յայտարար և ազգասէր սրտի ազնուական զգացման արգիւնքն եղող այն մեծագումար կապին ընդունեցինք ամենայն շնորհակալութեամբ . գոհացանք բերկրապատար սրտիւ և կ'աղօթեմք հանապազ, որ բարեխնամն Աստուած օրհնելով օրհնէ զՉեղ՝ Չեր զարմը և բարեժառանգ Պայազաւար . կը մաղթեմք եռանդաւոր պաշտօնաւոր, որ ամենաբարին Աստուած օգնէ և պահպանէ զՉեղ՝ Չեր բոլոր բարի գործոցը մէջ . յաջողութեամբ պսակէ Չեր օրհնեալ բաղձանքը և վարձատրէ զՉեղ Չեր առատ սրտի զուարթագին տրոյց փութարէն :

Աղին Տէր, Դուք Չեր քո՛ստունէական և մարդկային պարտաւորութիւնը ճանչնալով՝ Չեր արդար վաստակէն կը տասանորդէք Աստուծոյ, և յօգուտ Ազգային յառաջագիմութեան՝ երկու հազար վեց հարիւր յիսուս Եւ Ռոմ. լեր (2657) կը կտակէք սուրբ Երուսաղէմի Աբրոյ Յակօբեանց վանուց Դառանգաւորաց Վարժարանին՝ պահանջելով որ Չեր պայմանաց համեմատ անթերի եւ անայլայելի կերպիւ գործադրուին : Չեր իրաւունքն է այդ և մեր նուիրական պարտաւորութիւնը : Ուստի Չեր բարեպաշտ սրտի ապահովութեան և վրտահուութեան համար մէք ևս կ'երդնումք և կ'ուխտեմք առաջի Աստուծոյ և մարդկան, որ ամենայն հաւատարմութեամբ պատկառ կալով Չեր աստուածահաճոյ կամաց, Չեր կտակի պայմանները կէտ առ կէտ գործադրեմք անթերի, բուն Չեր նկատած

նպատակին համեմատ : Ամենապէս կը պարտաւորեմք մեր յաջորդները ևս, որ ըստ ամենայնի փոյթ և Զանք չըխընայեն սիրով և հաւատարմութեամբ գործադրել, արգիւնաւորել և յարատեւել այդ բարենպատակ կտակը : Այո, հաստատամտութեամբ կը խոտանամք, և Աստուծոյ ու Ազգին առջեւ պարտաւոր և դատապարտեալ կը համարիմք որ և իցէ անհատ մը կամ բաղմութիւն մը որ ինչ և իցէ միջոցով կամ նպատակով խափանաւորար ըլլալ ուղէ, կամ փոքրիկ անհաւատարմութիւն մը ընել մտաբերէ : Այնպիսին յաւիտենապէս նշաւակուած ու դատապարտուած է . իւր դատաւորն է ամենակալն Աստուած, դատախազն ընդհանուր Հայոց ազգը, և դահիճն է արդարութիւնը և իրաւունքը :

Արդ՝ Սեծապատիւ Տէր, ահա մենք Չեր կտակի յօգուածները մի առ մի յիշելով կը խոտանամք և կ'ուխտեմք անթերի կատարել և աւանդել զայն մեր յաջորդներուն :

Ա. — Կը խոտանամք Չեր կամաց համեմատ, երկու հազար Ռոմ. լեր (2000) դրամագլուխը միշտ շահեցողութեան մէջ պահել, իսկ 657 ոսկի գումարէն, Չեր յօժարակամ տրամագրութեան համեմատ Ս. Աթուոյս Տպարանին կցուած մասին նորոգութեան և ընդարձակութեան համար եղած ծախքը 'ի բաց հանել, որ է 274 ոսկի, և մնացեալ 383 ոսկւոյն հետ միացնել դրամագլխոյն ներկայ տարւոյն ('ի 12էն Յուլիսի 1871 թ 12 Յուլիսի 1872 ամի) արդիւնքը 200 ոսկի, և այս առ ձեռն պատրաստի 583 ոսկի դրամով արդէն իսկ ձեռն արկանել և շահաբեր շինուածքներ կառուցանել յօգուտ Դառանգաւորաց Դպրոցի Ս. Աթուոյս :

Բ. — Կը խոստանամք նոյնպէս 2000 ոսկի դրամագլխոյն տարուէ տարի բերած շահովը շարունակել հասութեաբեր շինուածոց կառուցումը, և նոյն շինուածոց բերած շահն ալ պէտք եղած ժամանակ թէ՛ շինուածոց նորագութեան համար գործադրել, թէ՛ Վարժարանի ամենակարեւոր պիտոյքը հոգալ և թէ՛ օգտակար գրքեր տպագրել միշտ ի հաշիւ և յօգուտ Սառանգաւորաց Վարժարանին, և կը հաստատեմք որ բնաւ իրաւունք չունիմք ուրիշ որ և իցէ բանի գործածել:

Գ. — Կը պարտաւորիմք ամենայն օրինաւորութեամբ և հաւատարմութեամբ գործադրելով և արդիւնաւորելով լրացմապատկել Վարժարանի եկամուտը, որպէս զի կարելի եղածին չափ շուտով կատարելագործի Վարժարանը և կարողանամք ըստ բուն նպատակին Հայաստանի այլ և այլ կարօտ գաւառաց մէջ ալ ձիւղեր տարածել:

Դ. — Մենաքաղցր և սրբազան պարտաւորութիւն է մեզ՝ Չեր կրտակի արդեամբ տպուած գրոց ճակատը դրոշմել Մշտեան ազնիւ ազգատոհմի անմահ անունը, ի յաւերժ յիշատակ անմահ հոգւոց կենդանեաց և ննջեցեաց բարերար զարմին Մշտեանց, նաև ամեն տարի օրինաւոր և կարգաւոր արձանագրութեամբ արդեանց և ծախուց՝ հաշիւ տալ Չեր, Չեր ժառանգներուն և Չեր Մշտեան տոհմի մերձաւոր ազգականներուն:

Ե. — Չեր Կտակահատարները ըզմեզ և մեր Յաջորդները կը կարգէր, մենք եւս սիրով և հաճութեամբ և երգմամբ ընդունելով և կատարելով կ'աւանդեմք մեր Յաջորդաց շարունակաբար, որպէս զի ըստ ամենայնի պարտաւորուած ըլլամք առաջի Մշտեանց և մարդկան՝ թէ՛ մեր և թէ՛ մեր յաջորդները ամենայն արթնութեամբ և հաւատարմութեամբ հրահանել և ըստ օրինաւոր կամացդ գործադրել Չեր Կտակը:

Զ. — Կը խոստանամք, կ'ուստեմք և կ'երդնումք յանուն արդարութեան և հաւատարմութեան, առաջի Մշտեանց և բոլոր Հայ ազգութեան, որ մեր՝ Կտակահատարքս և մեր Յաջորդները միշտ պարտաւոր ըլլամք ի սէր Մշտեանց և յօգուտ Մշտեան աշխատիլ սրտի հաճութեամբ և հաւատարմութեւ, որպէս զի Չեր Կտակը բուն Չեր բարի և օգտակար նպատակին գործածենք, առանց բնաւ որ և իցէ բանի գործածելու. իսկ եթէ ըլլայ որ մէկը կամ խումբ մը, յանդիմանի Չեր Կտակը իւր նպատակէն խտորեցնել, իրաւունք ունի թէ՛ Հայ Մշտեան և թէ՛ Չեր բարեժառանգ պաշտօնները դատախազ լինելու և ուղղելու բուն Չեր նպատակին:

Վհաւասիկ՝ ազնիւ Տէր և մեծ բարերար, ինչպէս դուք Չեր յօժար կամօք և ինքնայորդոր սիրով Չեր Կրտակը կ'ընէք, կը հաստատէք և մեզ կը յանձնէք անոր գործադրութիւնը. մենք եւս յօժարակամ սիրով և միաբան խորհրդով զայն անթերի գործադրելու համար պարտաւոր կը ձանդնամք մեր անձը առաջի Մշտեանց և համայն Հայ ազգութեան, սոյն անխուսելի պարտուց ենթարկելով նա և մեր Յաջորդները: Եւ ահա ի հաստատութիւն մեր խոստմանց, ի գիտութիւն ընդհանուր Մշտեան և ի միւս ամուսնութիւն Չեր կը ստորագրեմք:

2 Մայ. 1871

Մարտիրոս Կրտաւոր
Կարապետ ԵՍՍՅԻ
Կրտակահատար:

ԱՆԴԱՄԻՔ ԺՈՂՈՎՈՅ

Ս. Լըր-սաղէֆ	Ս. Լըր-սաղէֆ
Ն. Իսահակ	Յակոբ Եպիսկոպոս
Եպիսկոպոս	Տիգրանակերպոյի
Լըր-սաղէֆ	
Սարապէս Եպիսկոպոս	Ղըր-իսա վար-
Պր-իսա Սր-ի	Պր-իսա Պր-ի
Լըր-սաղէֆ	Ս. Լըր-սաղէֆ

ՏԵՍՈՒՅ

Ժառանգաւորաց վարժարանի

Մեքիսէթի վարժարանի
Սր-իսա վարժարանի :

Ղըր-իսա Կիսի օրինակի , յորոց մէն մի գը-
րանի ՚ի Պարբերաբարանի , ՚ի Լորեր-Երարանի ,
յիլէրէց-ը , ՚ի Վարժարանի և առ Բարեպաշտ
Կապիարանի :

ՄԵԾԱՊԱՏԻՒ ԵՒ ԱԶԳԱՍԻՐ ՏԵՐ

Բարեհաճեցէք Ձեր ներողամիտ
ունկնդրութիւնը մատուցանել քանի
մը հակիրճ և սրտաբուղիս խօսքերուս ,
զորս ՚ի դիմաց համօրէն ընկերակցացս
կը խօսիմ :

Դ՛նք Ձեր ներկայութեամբ կը
պատուէք՝ այսօր մեր մանկական խում-
բը . և գիտէք արդեօք՝ թէ որչափ
քաղցր և ուրախական է մեզ համար
Ձեր ներկայութիւնը : Ձեր ներկա-
յութիւնը լոկ հայազգի իշխանի մը
և մեծանուն այցելուի մը ներկայու-
թիւնն չէ , այլ Բարերարի , Խնամա-
կարի և ուսման Սատարի : Դ՛նք , բա-
րերար Տէր , Ազգին և ընկերային հա-

սարակութեան մէջ ունիք Ձեր ա-
նունը և համբաւը , իսկ Ս. Մթողոց
Սանուց սրտին մէջ գրողմած ունիք
Ձեր բարերարութեան յաւերժական
կնիքը : Ա՛նք կը հղովին , դարձ կ'անց-
նին , բայց այն փառաւոր կնիքը , այն
սրտադրաւ նշանը անջինջ կը մնայ ա-
մեն երախտագէտ մանուկներու սրը-
տին վրայ , որոնք այժմ կ'ուսանին և
որոնք յաջորդաբար տաղաւարելով
սոյն ուսման Տաճարին մէջ պիտի ու-
սանին ուսումն Իմաստութեան , Ղի-
տութեան , Բարոյականութեան , Աշ-
տուածպաշտութեան , Հայրենասի-
րութեան և Սարգասիրութեան : Որ-
չափ ուսանին , որչափ յառաջագիմեն ,
այնչափ աւելի պիտի սիրեն Ձեր ա-
նունը և Ձեր յիշատակը : Վասն զի
ուսանելով աւելի երախտագէտ պի-
տի լինին և աւելի քաջ պիտի ճանաչեն
այն վեհ Բարերարը , որ այսօր իւր
առատ և զուարթ բարերարութեամբ
իշխանութիւն ունի մեր ամենուս
սրտերուն վրայ , իշխանութիւն՝ ոչ
տիրապետական և բռնական , այլ
իշխանութիւն հայրական , իշխանու-
թիւն բարեգործական : Ո՛ր , որչափ
քաղցր է այս իշխանութիւնը թէ՛ իշ-
խողաց և թէ՛ իշխեցելոց համար : Ի-
մաստունները մարդոյ միտքը կը գե-
րեն իրենց իմաստութեամբ , և Բա-
րերարները մարդոյ սիրտը կը գերեն
իրենց բարերարութեամբ . իսկ այն
Բարերարները , որոնք ուսման կը նը-
պատեն , որոնք Վրթութիւնը և Վու-
սաւորութիւնը կը քաջալերեն , նոքա
կը գերեն մարդոյ սիրտը և միտքը հա-
մանգամայն . նոքա կ'իշխեն հոգւոյն
վրայ :

Արդ՝ Սեծախնամ Բարերար , տա-
րակոյս կայ արդեօք անկեղծօրէն ըսե-
լու թէ՛ Դ՛նք իշխեցիք ամեն զգայ-
ուն և երախտագէտ հոգիներուն վը-

քայ : Դ՛ռք , Չեր անմահ Կոսկով
անմահ արձան կանգնեցիր Դառան
գտւորաց Վարժարանին անմահու
թեան համար : Դարուց ՚ի դար պէտք
է օրհնուի Չեր անունը , Չեր յիշա
տակը և համայն Աշքեան Աղգատոհ
մը : Սէք , մատաղերամ Սանունքս
կրակինք այսօր այս օրհնութիւնը , և
մեզ յաջորդները պիտի կրկնեն ան
դադար սոյն երախտագիտական հա
մառօտ դասը — ՕՐՀՆԵԱԼ ԵՔ ԴՈՒՔ
ԱԶԳԱՍԻՐ ԲԱՐԵՐԱՐ , ԵՒ ՕՐՀՆԵԱԼ Ե
ՂԻՅԻ ՅԱԽԻՏԵԱՆ՝ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐ ԵՒ ԲԱ
ՐԵՊԱՇՏ ՏՈՒՄՆ ԱՇԼԳԵԱՆ :

Ի Տիմայ Աշկերաց Ժա
ռանգաւորաց Վարժարանի :
Գ. Տ. Յ.

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Ա. Ռ. Ո. Ղ. Զ. Ո. Ի. Թ. Ե. Ա. Ն.

(Հարունակութիւն , տես թիւ 11 :)

Արեւելի հեղինակ մի զանապետ
թենէ կերակրող այսպէս խօսի , « Վասն
իմ , տսէ , համարիմ թէ պատրաստեալ
կայ նորամուտ սեղան մի , յորոյ վերայ
եղեալ կան հանդերձանք բազմապիսի
համադամ կերակրող , բայց անդէն և
րեւակայի ինձ տեսանել անդ զյօդա
ցաւութիւն , զջրդողութիւն , զջերմն ,
զքնափութիւն , զթմբրայաւութիւն ,
և ընդ նոսա զայլ անթիւ արաս և հի
ւանդութիւնս , դարանեալս ՚ի մէջ
սիւտեղաց և ավսեից » :

Անբարեխառնութիւնն ոչ միայն
ի շուսպտութենէ կերակրող աստակա

նէ զառողջութիւն մարդոյ , այլ և
բազմակերպ անառակ գնացիւք , ո՛վ ,
որչափ փութով աւերի և խամբանայ
խաբառ գեղեցիկ և քաջառողջ կաղ
մուած մարդոյ զհետմղելով զգայական
բերկրութեան ամօթալի գործոց , կամ
չարաչար ՚ի կիր առնելով զարեցուցիչ
ընկելիս , որ և այս ամենաչար մու
թիւնք ձեռն ՚ի ձեռն ընթանան ու
րեք . զի ուժգին սիրով յարեալ ՚ի սէր
Վէնուսի և Բագուսի՝ նախ քան ՚ի ժա
մանել ընտրագոյն և ծաղկափթիթ հա
սակ կենաց պիտանի ընկերութեան ,
մաշին ՚ի պէսպէս վշտալի ցաւոց , և
երազաքայլ ոտիւք փութան ՚ի գե
րեզման :

Ո՛վ , եթէ մարդ զմուռ ածիցէ
զվշտալի հիւանդութիւնսն և զկան
խահաս մահն , որք պատճառին ՚ի
մարդ յանբարեխառնութենէ , զնորդ
ազդու խրատ լինիցի ամենեցուն , ա
տելութեամբ խորշիլ ՚ի դիւրահաշ
քաղցրունակ և քնքուշ վայելչութե
նէ և ՚ի վալաշ հրապուրիչ ցանկու
թենէ նորա :

Անբարեխառնութիւնն ոչ միայն
չարաչար մեռալ զաւատելոցն ՚ի նա .
այլ և անմեղք իսկ բազում անգամ
կրեն անտի զդառն և զանողորմաղէտս
թշուառութեան . զի քանի՞ տարա
բաղդ որք տեսանին ձգեալ յաղբա
նոցս , որոց ծնողք անհոգ և անփայթ
ապագայից , անցուցանեն զկեանս ՚ի
շուսպտութեան և յանառակութեան :
Այսպիսիք՝ որք մուրերալ են զհետ
զգայական հեշտութեանց , կարե՞ն
արդեօք ըստ արժանւոյն ցուցանել
ղաւակոց իւրեանց զսաշտոն ծնողա
կան . ոչ երբէք : Այլ քանի՞ թշուառ
մարդ ընդ անօգնական երախայս իւ
րեանց հաշին և մաշին ՚ի կորօտութենէ
հոցի , մինչ պաշտէ անողորմ և անգութ
հայրն զհաճոյս անյագութեւ ակորժա

կաց իւրոց : Յանբարեխառնութեանէ բազում ընտանիք ոչ միայն անկանին ՚ի թշուառութիւն, այլ և միանգամայն բնաջինջ լինին . քանզի ոչինչ այնչափ պատճառէ արգել սերնդոյ, և կարճէ զկեանս մանկանց, որչափ անբարեխառնութիւն ծնողաց :

Այլքատիկ այրն, որ վասն օրական հացի տքնի յամենայն օր ՚ի ծանր վաստակս, և ՚ի գիշերի ընկողմանի ՚ի գետնի խոնջեալ մարմնով յանոյշ քուն, գոհ ՚ի փոքրիկ արդիւնս բրբտանց, ամենայն իրաւամբ կարող է պարծիլ ընդ բազմութիւն առողջ և կայտառ զաւակաց իւրոց . իսկ բազմահարուստ տէր նորա, որ ընկզմեալ ՚ի հեշտասիրութիւնս և ՚ի շուստանքս, բազում անգամ հիւժեալ և քաղեալ ՚ի զօրութենէ մեռանի, թողլով զինչս և զստացուածս իւր անտէր և անժառանգ : Այսեւ, արք երեւելիք, իշխանք, թագաւորք և կայսերք առնուն զչափ ներգործութեան անբարեխառնութեան, յորոց բազումք բարձրանան և բազումք եւս անկանին ՚ի խորս թշուառութեան, և յայնցանէ բիւրաւորք մաշին ՚ի կորուստ : Այլ այժմ փոխանակ յառաջ բերելոյ զպէսպէս տեսակս անբարեխառնութեան, և ցուցանելոյ զնոցին վտանգաւոր ներգործութիւն ՚ի վերայ առողջութեան, միայն առցուք մեզ օրինակ զմինն ՚ի նոցանէ, այսինքն ըզչարաչար կիրառութիւն արբեցուցիչ ըմպելեաց, և ցուցուք զնորին վտանգ, ապականութիւն և աւեր առողջութեան, ընչից և համբաւոյ :

Արբեցուցիչ ըմպելիք ՚ի կիր առեալ յանչափս, նուազեն զաղիս, ապականեն զմարսողութիւնն, վնասեն կարողութեան ջղաց և պատճառեն հաշմութիւն և կարկամութիւն. նաև բորբոքի արիւն և ապականի աղդէ.

ցութիւն նորին, որով անկարգանայ նորին ջըման և սնունդ մարմնոյ. ուստի յառաջ գայ անտաճութիւն, ջրգողութիւն, թոքացաւ, կաթուած և երբեմն խեղադարութիւն :

Չիք դեղ և ճար այսպիսի հիւանդութեանց յառաջ եկեալ ՚ի սաստիկ ըմպելոյ, միայն մահն է բժիշկ նորա՝ հանդուցիչ ամենայն ցաւոյ : Բազում անձինք թէ և ոչ արբենան, բայց ընկ ըմպելով եւս վնասի առողջութիւն նոցա, զի ներգործութիւն շարունակ ըմպելոց չէ այնչափ զօրաւոր, բայց և չէ անվնաս . քանզի յորժամ անթթ մարմնոյ միշտ ձկոեալ կան չկարեն ըստ արժանւոյն կատարել զմարսողութիւն, և ոչ հիւթքն նորոգին, և որք են ՚ի սոյն ունակութեան, վշտանան ՚ի յօգացաւութենէ, ՚ի քարէ կամ ՚ի խճէ, ՚ի կեղալից վիրաց, յախաէ մորթոյ, և կորուսանեն զոգի զօրութեան, ըմբռնին յախտ ախտեանաց, յանմարսութիւն, ՚ի թթուածութիւն և ՚ի կծութիւն :

Արք ըմպեն զհրատապ օղի, ձգեն զինքեանս եւս առաւել ՚ի վտանգ. զի այս ըմպելի ջերմացուցանէ և բորբոքէ զարիւն, պատառէ ՚ի մասունս զգողորիկ աման թոքին, յորոց յառաջ գայ տապացուցիչ ջերմն, թոքացաւ, փսխումն արեան, սաստիկ հազ, շնչարգել, և այլն :

Սովորութիւն շարունակ ըմպելոյ բազում անգամ պատճառէ նաեւ զթշուառութիւն մեծ, ձգելով զմարդ ՚ի յետին տարաբաղդ վիճակ : Այլ մեղին վազէ առ ըմպելի ինչ, ՚ի քաջալերութիւն և ՚ի խրախոյս վհատեալ սրտի իւրոյ, յորմէ և գտանէ իսկ, բայց աւանդ, զի այս միջթարութիւն է յոյժ կարճատեւ, զի յորժամ սթափի նա ՚ի զինւոյ, բնական զօրութիւն ողւոյն, որով հնարէր նմա տա.

նիլ ճանրութեան տառապանաց, լը-
քանի ՚ի կարի ստորին վհատութիւն,
և կորուսանէ միանգամայն զբան և
զզօրութիւն մտաց. ուստի սրարտա-
ւորի նորոգել զզօրութիւն իւր կրկն-
մամբ, և իւրաքանչիւր ումպ բանայ
զճանապարհ վասն միւսոց, և այսպէս
ապերձանիկ թշուառականն՝ որ գուցէ
ոչ գիտէր բնութ բնութ յառաջ, ե-
թէ ոչ իբրեւ զգեղ, լինի գերի սը-
րուակաց, հուսկ ապա զո՛հ նմին:

Չիք որ այնպէս վհատեալ ՚ի սիրտ
և ՚ի միտս որպէս արբեցողն յորժամ
սթափի ՚ի գինւոյ, տարաբախտ է նա
խկապէս:

Այնոքիկ՝ որք ոչ շատանան արբե-
ցութիւն, և բաժակն առատօրէն միշտ
շուրջ անի ՚ի մէջ նոցա, չեն ազատ ՚ի
պէսպէս արկածից և ՚ի մահառիթ վը-
տանգաց կենաց իւրեանց և անմեղ
ընկերի:

Արբեցութիւնն ոչ միայն վնասէ
առողջութեան, այլ և խամբացուցա-
նէ զկարողութիւն մտաց, բառնայ
զյիշատակութիւնն և թափէ միան-
գամայն զզօրութիւն ոգւոյն:

Օտրմանալի է յոյժ, զի մարդ վասն
բանականութե՛ իւրոյ նախադասէ զին-
քն գերանգանցութեամբ քան զա-
նասունս, բայց բուռն յօժարութեամբ
զհետ մոլեալ արբեցութեան, առ-
նէ զինքն անբան քան զանասուն:

Ահ, այս մոլեկան ախոտ քանի՞
գերդգոն, մեծահոգի, քաջասիրտ, գոր-
ծունեայ և պիտանի ընկերութեան
անդամս արարանբան տղէտ և անողի:

Արբեցութիւնն ոչ միայն ըստ ին-
քեան է թշուառացուցիչ մոլութիւն,
այլ նաեւ գրգռիչ և թելադրիչ այլ և
այլ չարաչար մոլութեան և անողորմ
գործոց. Օ՛ի չիք ինչ զարհուրելի
մեղք և անօրէնութիւնք, զորս ար-
բեցողք ոչ գործեն վասն սիրոյ ըմպե-

լեաց. զի մարդք ոմանք ըմբռնեալ ՚ի
սոյն ախտ, յուցին զինքեանս առաւել
անապօրոյն քան զվայրենիս, որք երբ
ստիպեալ ՚ի սոյն չարաթոյն մոլութե-
նէ, վաճառեցին զհանդերձ մանկանց
իւրեանց, ապա զապրուստ նոցա, և
ապա զերեխայս իսկ, առ ՚ի գնել զայս
նզովեալ ըմպելի: Այլ արբեցութեամբ
իսկ բազումք կորուսին զթանկագին
կեանս իւրեանց, զսիրելեաց և զբարե-
կամաց, որպէս առօրեայ տեսանի այն
յընկերութիւնս մարդկան, վասն որոյ
չիք այլ բուռն մոլութիւն, որպէս
արբեցութիւնն, զի զեղևք և շուայ-
տողք ինքեանց միայն վնասեն, այլ
արբեցողք ընկերին եւս, յորոց Տէր
փրկեսցէ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Ապրտութիւն:

Պակասութիւն մաքրութեան է
այնպիսի յանցանք մի, որում ներել
չէ արժան: Օ՛ի ուր է առատու-
թիւն ջրոյ, ամենայն որ դիւրեաւ կա-
րէ պահել զինքն միշտ մաքուր, և որ
ոչ փոյթ տանի այսմ, արժան է ըստ-
գտանոց:

Ահ ՚ի չարունակ արտաթորելու
բրտունս ոչ միայն հարկաւորի պահել
զմարմինն միշտ մաքուր, այլ և պարտ
է ստէպ փոխել զգգեստան: Օ՛ի փո-
խելն զգգեստուց արձակէ զլիզլանս
մորթոյ, որ ոչ սակաւ օգտէ առող-
ջութեան. քանզի թարախք մարմնոյ,
որք պարտին բրտամբք ՚ի դուրս վա-
րիլ, յորժամ մնասցեն ՚ի մարմնի, կամ
կրկին ներծծին յաղտեղի և ՚ի բրտ-
նաթոր զգեստուց, անկասկած պատ-
ճառի աստի հիւանդութիւն ինչ:

Փորձիւ յայտ է, զի ախտակրու-

թիւն մարդոյ , յառաջ կայ յանմաք-
րութենէ մարմնոյ և այս անշուշտ
սպառնառի յաղտեղի դժեստուց :

Իցէ թէ աղքատիկ կեցութեամբ
կամանառողջ կերակրովք երբեմն մար-
դիկ ըմբռնեսցին 'ի տարափոխիկ կամ
յայլ ապականարար ախտ ինչ , բայց
ոչ տեւեսցէ երկար , եթէ ոչ սակա-
սեցի անդ մաքրութիւն մարմնոյ , ըզ-
գեստուց և բնակութեան , վասն որոյ
պարտ է ամենայն արթնութեամբ ըզ-
գուշանալ ընդդէմ ամենայն վնասա-
կար և ապականիչ առողջութեան ճը-
ճեաց և որդանց , որք եւն ոջիլ , լու ,
մլուկն , մրջիւն , ճանճ և մծեխ , և
այլն . որք գոյանան միայն յանմաքրու-
թենէ , և վտարին միայն մաքրութե-
ամբ . և ուր 'ի բառնալ զայնս ան-
փոյթ մնան , անդ չիք երբէք հան-
գըստութիւն մարդոյ : Սին 'ի գըլ-
խաւոր պատճառաց նեխեալ և մա-
հառիթ ջերման է պակասութիւն
մաքրութեան . զի այս վտանգաւոր
ջերմն սկսանի 'ի խուռն բնակչաց՝ կից
անձուկ և աղտեղի տանց , յորս միշտ
անառողջ օդ շնչեն , մնան ընդ երկար
յաղտեղի զգեստս և չունին բաւա-
կանին կրթութիւն . և այս ջերմն բա-
ղում անգամ փոխի յախտ տարափո-
խիկ , որոյ տարածեալ 'ի հեռաւորս ,
կոտորէ զբազումս : Վասն որոյ արժան
է հասարակաց ամենայն մտադրու-
թեամբ նախապատիւ համարել զամե-
նայն առարկայ մաքրութեւ , զի չէ բա-
ւական եթէ ես միայն մաքուր իցեմ
և դրացին իմ անմաքուր , զի անմաք-
րութիւն նորա այնչափ վնասակար է
առողջութեան իմոյ , որչափ նորին
իսկ անձին :

Յայտնի է ամենայն փորձիւ , զի
տարափոխիկ ախտն ծնանի յապտ-
կանեալ օդոյ , վասնորոյ պարտ է մե-
ծաւ զգուշութեամբ ընդդէմ կալ

ամենայն աղտեղի իրաց , որ ունի ըն-
դակցութիւն ապականութեան օդոյ ,
ուստի յամենայն քաղաքս , գիւղս և
'ի շէնս պարտ է կարի խստիւ արգե-
լուլ բնակչացն , զի մի իշխեսցեն ճը-
գել 'ի փողոցսն զպէսպէս նեխեալ
կամ զաղբալի իւր . յատկապէս զկըզ-
կղանս հիւանդին , որ առաւել ապա-
կանարար է օդոյ , և արտագրիչ տա-
րափոխ ախտի :

Վենայն որ՝ որ յայց ելանէ հի-
ւանդին կամ շօշափէ զգի մեռելոյ , և
կամ հպի յիր ինչ աղտեղի , որոց հը-
նար է պատճառել ախտ տարափո-
խիկ , բարւոք է նմա նախ քան զմտա-
նելն 'ի յընկերութիւն ինչ , կամ
մատչիլն 'ի կերակուր , լուանալ զինքն ,
որով թէ ինքն և թէ հաղորդա-
կիցք իւր աղատ մնան 'ի վտանգէ :
Օչայս սովորութիւն սրահել պարտ
է 'ի յուղարկաւորութեան , կամ
'ի մտանելն 'ի գերեզմանատուն ինչ :
Ստէպ լուղանալն ոչ միայն բառնայ
զաղտեղութիւն և զկեղտ մարմնոյ ,
այլ և յառաջ բերէ զբրտուհս , պըն-
դէ զջիղսն , զուարթացումն զմար-
մինն և տայ կարողութիւն սկերբացն :
Օխարդ ոչ վայելեսցեն միշտ զառողջ
և ուրախ կեանս , որք սովոր են յամե-
նայն աւուր սափրել զինքեանս , լու-
ղանալ , փոխել զհանդերձս և առ-
նուլ զկրթութիւն ինչ : Արում եթէ
որ ունիցի կամս շարունակ հետեւել
յերիս կամ 'ի չորս աւուրս , հաւաս-
տի եմ ոչ զանց արասցէ երբէք կա-
տարել զայն 'ի բոլոր կեանս իւր :

Յաղաքս այսորիկ կարէ որ օրինակ
առնուլ 'ի Սահմետականաց թէ 'ի
մասին մաքրութեան , և թէ ըմպելոյ
զօրաւոր հեղուկաց . յորոց յօրէնս
նոցա առաջինն՝ որ ասի զուղ , հա-
մարի սուրբ , զոր և կատարեն յա-
մենայն առաւօտու . բաց յայսմանէ

նաեւ նախ քան զաղօթելն յաւուրն հինգ անգամ սովոր են լուանալ զբրեւս, զձեռս և զոտս: Իսկ վերջինն համարի անսուրբ կամ մեղք, ո՞րք զանցանէ զօրինօքս, համարի 'ի Մահ մետականաց օրինազանց և մեղապարտ: Իայց Մուհամէտ եղ զայս պատուիրան 'ի վերայ հաւատացելոց իւրոց, յաւէտ վասն առողջութեան և բարօրութեան նոցա, որ և իրաւի չէր սխալ. զի յաւէտ 'ի Մահմետական տեսանի այս երկոքին բարեբաստիկ վայելչութիւն, առողջութիւն և բարօրութիւն:

Սովորութիւն լուանալոյ զոտս բարի է յոյժ և կարի օգուտ առողջութեան, քանզի այս մասն մարմնոյ գոլով կարի անմաքուր և պատեալ միշտ 'ի կեղտից և 'ի քրտանց, արգելու զայլ քրտնուս մարմնոյ, յորմէ յառաջ գայ սառնութիւն և ջերմն: Թող զի և այս կեղտ և քրտունք երկար մնալով յոտս, պատճառեն այնպիսի զուեւելի հոտածութիւն, զոր անհնար է տանիլ առանց ժխորման ստամոքսաց: Վասն որոյ առ 'ի բառնալ զայս վնաս և զգարչելի հոտ, հարկ է յամենայն երեկոյ և առաւօտ լուանալ զայնս ցուրտ կամ գաղջ ջրով:

Եւս սովորութիւն առաւել օգտէ այնոցիկ, որք 'ի ցերեկի յարեալ են 'ի ցրտութիւն և 'ի թացութիւն, յերեկոյեան լուանան զոտս իւրեանց ջերմ ջրով, որով և ազատ մնան 'ի վնասանգաց անառողջութեան, որք գրեթէ բազում անգամ յառաջ գան յայսպիսի պատճառաց:

Աւր են բաղմութիւն հիւանդաց անկեալ 'ի միասին 'ի միում տեղում, որպիսի են 'ի բանտի, 'ի հիւանդանոցի կամ 'ի յանկեւանոցս, պարտ է կարի զգուշութեամբ մտադիր լինիլ մաքրութեան բնակարանի, սենեկաց,

զգեստուց և անկողնոց հիւանդաց. քանզի աղտեղութիւն բնակարանի, ծանր և վնասակար հոտ քրտանց, ուր եթէ ոչ խաղայ ազատ օդ, կարի վտանգաւոր է առողջ անձանց, թող թէ հիւանդաց, որ և բազում անգամ ապականեալ օդոյն, տարածէ աստ և արտաքս մեծ հարուած տարածամ մահու:

Եթէ պիտոյ են առողջաց մաքրութիւն, որչափ եւս հիւանդաց. զի բազում անգամ հնար է հիւանդին ողջանալ՝ պահելով զնա ամենայն մասամբ մաքուր, և ուր է զանցառութիւն, անդ բազում անգամ թեթեւ հիւանդութիւնն փոխի 'ի կարի ծանր և վտանգաւոր հիւանդութիւն, արդէն լիովին ասացեալ է վասն հոգաբարձութեան հիւանդաց՝ թէ ո՞րպիսի խնամատարութեան կարօտին հիւանդք:

Ի վերջ ամենայնի մաքրութիւնն է յոյժ բերկրալի և վայելուչ բնութեմաբդոյ, որ ոչ միայն է գերազանց միջոց առողջութեան և զուարթարար մարմնոյ, այլ և հաճելի տեսողաց. վասնորոյ ամենայն դէ 'ի բարձր և 'ի ստոր վիճակէ, հարուստք և աղքատք պարտին առաւել փոյթ տանիլ մաքրութեան, և պարզ և յստակ զգեստուց, քան հարստութեան և պճնողական զարդուց. զի առաքինութիւն որ է գերագոյնն բարեաց, գրեթէ չէ այնչափ յարգի հասարակութեան և 'ի մէջ միաբանութեան, որչափ մաքրութիւնն, որ շնորհէ զբերկրութիւն քաղաքական ընկերութեան և յամենայնէ մեծարի. և ազատ պահէ զմարդիկ 'ի վտանգաւոր ախտից:

ԳԼՈՒԽ ԺԲ .

ԿԻՐՔ .

Կիրք ունին զսաստիկներգործութիւնն ՚ի վերայ մարմնոյ , յորոց և պատճառի ՚ի մեզ հիւանդութիւն կամ առողջութիւն :

Արդէն ցուցեալ եմք զչափ ներգործութեան մտաց ՚ի վերայ մարմնոյ , թէ որչափ սաստիկ է . նաեւ են թաղբութիւն բնաւոր շարժման ՚ի մէջ մարմնոյ և մտաց , որով որ ինչ փնաս պատճառի միւրն , չէ ազատ և միւսն . քանզի հաստատեալ է ՚ի բարոյական իմաստասիրաց , թէ կայեան կրից է սիրտ կենդանեաց . և սիրտն ՚ի տեսչութենէ տուեալ մշտնջենաւոր իմն և բանաւոր շարժումն խառնուածոյ անհատին , լայնեալ և կծկեալ բազմօրինակ չափու , ՚ի տուր և առութիւն շնոյ , և ՚ի ծաւալել զկենսական ոգիս ընդ ամենայն մարմինն : Բայց թէ յուզի նա ՚ի բուռն կրից , յայնժամ օտարոտի լայնմամբ և կծկմամբ այլայլեալ զհամեմատութիւն շարժման , այլայլէ զգայարանս . և այնչափ են փոփոխութիւնք սրտի , որչափ և կրից , ընդ որոյ և միտք և կամք ունին զհամակրութիւնն : Այս աս փոփոխութիւնք կրից լինին ՚ի սիրոյ առատեւութիւն , ՚ի ցանկութենէ առ փախուստ , ՚ի բերկրութենէ առ տրամութիւն կամ ՚ի թաղծութիւն , ՚ի յուսոյ առ յուսահատութիւն , ՚ի համարձակութենէ առ երկիւղ , և ՚ի բարկութենէ առ մեղկութիւն , որոց գլխաւորապէս պատճառեալ ՚ի բաղձողական կարողութեանց զգալէաց , այսինքն յերեւակայական ըմբռնողութենէն առաջիարարեալ առարկայից ծագին այս օտարոտի փոփոխութիւնք սրտի : Այս յայտնէ

բարկութիւն , երկիւղ , տրամութիւն , սէր և կրօնաւորական թաղծութիւն ունին ուժգին ներգործութիւն ՚ի վերայ մարմնոյ և մտաց , զորոց խօսեալ ցուր յառաջիկայս :

(Շարունակելի :

ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՅ ԽՆԴԻՐԸ

(Շարունակութիւն և վերջ , տես թիւ 10.)

« Գլխում , Վսեմ , Տէր , պիտի բռնէք որ չես գիտեր թէ Տէրութիւնն ալ ստիպեալ է օտար ազդեցութիւններէ այդ ընդդէմ արդարութեան և խղճի որոշումն և բռնադատումն ընել : Այս աս ալ իրաւ է , բայց և այնպէս դարձեալ այդ Տէրութիւնները որ զիրենք կրօնից աղատութեան և ազգաց իրաւանց պաշտպան կը քարոզեն ՚ի լուր աչխարհի , Օսմանեան բարեխնամ Տէրութեան հարազատ հպատակ Հայոց ազգն ինչո՞ւ այսքան կը տագնապեն . Հայոց կրօնքը ազատ մնալու ինչո՞ւ արգելք կ'ըլլան . ինչո՞ւ Հայոց ազգին իրաւանցը կը փնտռեն . իրաւունք ունին Պրանչիսկեանք մեր թողլաւորած մեր սուրբ եկեղեցւոյ մէջ մեր կրօնքը քարոզ տալով նախատելու և մեր Աղբ հերձուած և հերետիկոս կոչելու , սատանայի որդի և դժոխոց ժառանգ անուանելու : Աւրոպայ այդ Տէրութեանց ո՞ր օրէնքը կը ներէ եղեր և ո՞ր դատաստանը այդ վճիռը կըրնայ տալ . և եթէ Օսմանեան Տէրութեան հպատակ բրիտոնեայ մի կամ նոյն տէրութեց և կամ որ և իցէ օտար Տէրութեան հողի մէջ բնիկ Աւրոպա

ցիւի մը հետ այսօրինակ դատմը ունե-
նալու ըլլար, ինչպէս Ֆրանչիսկեանք,
արդեօք նոյն Տէրութիւնները իրենց
հպատակ բնիկները այսքան պիտի ըս-
տիպէին, այսքան պիտի նեղէին իրենց
սեպհական իրաւունքին մէջ օտար
հիւր մը ընդունելու, ինչպէս Ռ. Ղու-
ռը այսօր զՀայոց Պատրիարքը կ'ըս-
տիպէ. քաւ լիցի. ոչ թէ միայն չէին
ստիպեր, այլ և եթէ իրենց հպատա-
կը թոյլատրած եւս ըլլար իրենց սեպ-
հականութեան մէջ, նոյն իսկ տէրու-
թիւնները անշուշտ պիտի հերքէին
ըսելով՝ այդ մեր բոլորիքային դէմ է:
Ըրդ՝ իրենց ուրիշ համար արգիւ-
ծը, իրենք այլոց ինչո՞ւ կ'առաջարկեն,
և կըստիպեն և ստիպել կուտան հա-
կառակ ամենայն օրինաց:

«Ուրեմն Ռ. Ղրան տագնապը ինչ
է, միթէ Տաճկաստանը իրեն համար
յատկացեալ բոլորիքա մը չունի. ե-
թէ Ռ. Ղուռը չցաւիր և կը թոյլատ-
րէ մեզ, մենք ընդհանուր Հայքս
ազգովին կը բողոքեմք նոյն Լէրոպիոյ
Տէրութեանց թէ ամենուր միանգա-
մայն, և թէ զատ զատ իւրաքան-
չիւր Տէրութեան, տեսնենք ինչ պա-
տասխան կրնան տալ: Սիւթէ աշխար-
հիս վրայ արդարութիւն, իրաւունք,
դատ և դատաստան չմնայ, քննուե-
ցան ամենքն ալ, արդարութիւն և
իրաւունք հզօրին ձեռքը գերի՞ ինկան
որ ուզածին պէս գործածէ. քաւ լիցի:

«Հայոց ազգին մարդասիրութենէ
շարժեալ և միամտաբար տարին մի
անգամ իբրեւ շնորհք պատարագե-
լու համար ըրած թոյլատրութեան
փոխարէն, նոյն Հայոց Եկեղեցւոյն
մէջ Հայոց կրօնքին դէմ հայհոյու-
թիւն ընելը ո՞ր քրիստոնեայ Տէրու-
թիւն կրնայ յանցանք չէ ըսել:

«Հայոց Պատրիարքին Աղիպատոս
գտնուած ժամանակին Ֆրանչիսկեան

կրօնաւորաց գրգռմամբ Վաղղիոյ Պ.
Հիւպատոսին Օսմանեան բարեխ-
նամ Տէրութեան հպատակ Հայոց Ե-
գին վանուց դրան առջեւ կանոնա-
ւոր և անկանոն զօրքեր բերելը ա-
ռանց Հայոց Պատրիարքին հաճու-
թիւնը առնելու, ո՞ր Տէրութիւն
կրնար թոյլատրել, Տէրութեան մէջ
տէրութիւն չըլլալը միթէ չէին գի-
տեր: Եւ չէին գիտեր որ Հայոց ազ-
գը իւր թագաւորէն ամենայն կեր-
պիւ գոհ է, ուստի միշտ հլու և հնա-
դանդ. և այդպիսի արարքներ ընելը
Հայոց դարաւ որ հաւատարմութեան
սաստիկ հարուած տալ է:

«Նոյն օրը Պ. Հիւպատոսին իւր
պաշտօնական աթոռը գործադրելու
մէջ միայն դնելու իրաւունք
ունի, և ոչ այլ ուրեք երբէք, Հայոց
եկեղեցւոյ մէջ բերել դնելը և նստե-
լը միթէ փոքր անպատուութիւն էր-
ինչ պիտի ըսեն Լէրոպիոյ Տէրու-
թիւններն այս արարքին: Եւ այսքա-
նեօք եւս չբաւականանալով կարծես
թէ Հայոց սեպհականութիւնը ծա-
խու առած են, կամ թէ Հայոց ազ-
գէն երբէք մարդ չէ մնացեր աշխար-
հիս վրայ, են, են, են: Եւ այսքան
տմարդի վարմունքներէ զինի, ար-
դեօք կրնայ Հայոց ազգը ներել ա-
նոնց որ գան և իւրեանց սեփհակա-
նութեան մէջ վերոյիջեալ հոյհոյանք-
ները դարձեալ ընեն. ո՞չ, ո՞չ, այսու-
հետեւ Հայոց ազգին կողմանէ ան-
կարելի է ներել այնպիսի անհաշտ թըշ-
նամայն, որ իւր սիրելի և բարեկամ
եղած միջոցին անգամ այսքան աղէտից
պատճառ տուաւ: Եւս այս է իմ ա-
ռաջին և վերջին խօսքս և պատասխա-
նըս. ըսաւ Հայոց Արքայան Պատ-
րիարքը և վերջացուց իւր խօսքերը:

Եւ արդ կարելի է որ այսքան դա-
րուց ի վեր երաշխաւորեալ և փոր-

ձեալ հաւատարմութեան հակառակ՝ այսօր Հայոց Պատրիարքը ելլէ ինքնօրէն շարժելու փորձեր ընէ՝ ի վնաս իւր և ազգային սպառնոյն . այլ աւելի լաւ համարեց մերժել Վատինաց խնդիրքը, զոր եթէ յանձն առնուր՝ իւր ազգին վստահութեանը դէմ պիտի մեղանշէր :

Հետեւեալ օրը՝ Նորին . Սրբազնութիւնը Վսեմ . Սոսթատարութիւնը Պէյին քով գնալով իմացուց անոր Վատինաց սպառարագին աւուր մօտենալը , ու ըսաց . « Նոքա իրենց թարգմանը խրկելով հրաման խնդրեցին . ես պատասխանեցի թէ այդ թոյլտուութիւնը անցեալ տարիէն ի վեր խափանուած է , և անոր համար յուզուած խնդիրը վերջացած . դուք Հայոց ըրած շնորհքը չարաչար գործածել ուղեցիք , վասն որոյ ես ալ բոլոր ազգիս հաճութեամբը ետ առի զայն , ուստի այդ բանին համար հրաման խնդրելը անօգուտ է . որովհետեւ չպիտի կրնամ շնորհել և պատասխանատու ըլլալ ընդհանուր ազգիս : — Սոյն վըճռական պատասխանս հաղորդելու համար փութացի Ձեր Վսեմութեան քով անձամբ գալ , և իմանալ թէ Բարեխնամ Տէրութեան հտրադատ հպատակ ժողովրդեան մի իրաւունքը պիտի պաշտպանէք պէտք եղած միջոցներն ի գործ դնելով թէ ոչ : »

Նորին Վսեմութիւնը կէս մի հեգնելով ըսաւ . « Դուք վանքին դուռը գոցելով բանալիքները մէջքերնիդ խօթելը արդէն գիտէք : —

« Այո , կրկնեց Ն . Ս . Խանէի գայիֆի վանքը քաղաքէն դուրս և առանձին տեղ մի ըլլալուն , մանաւանդ Ձեր Վսեմութեան և Տէրութեանս պաշտօնէից և զօրաց նեղութիւն չտալու համար , այդ դիւրին միջոցը ձեռք առինք այն ատեն : Այլ և յիշեալ վանքը

դրեթէ միշտ գոց կը մնայ և ուստաւոր եկած ժամանակ և կերակուր ընդունելու համար միայն կը բացուի : Իսկ Սար-Եագուպ վանքը , որ այսօրեայ օրս Բարեխնամ Տէրութեան շնորհիւ Հայոց ընդհանրութիւնը կը ներկայացնէ , անոր դուռը միշտ բաց կը մնայ , չէ թէ միայն այս ժամանակիս մէջ յորում շնորհիւ Օսմանեան Տէրութեան ամեն ազատութիւն կը վայելէմք , այլ և անցեալ հին ու վերանգաւոր դարերուն մէջ անգամ միշտ պաշտպանուեր է տիրող կառավարութեանց ձեռք : Ուրեմն Հայոց Պատրիարքը ինչպէս կրնայ այդպիսի երեւելի վանքի մի դուռը գոցել առանց չարաչար մեղանշելու Տէրութեան և ազգին սպառնոյն դէմ : Բանի որ մեծազօր Տէրութեանս աթոռը հաստատ է , և ողորմած կայսրն Վստիւլ-Վրիզ խանը իբրեւ առիւծ հըզօր անոր վրայ բազմելով կը հսկէ իւր հպատակաց անդորրութեանը և իրաւանց , կարելի չէ որ Հայոց Սար-Եագուպ վանքին դուռը ցերեկ ժամանակ գոցուի : Ուրեմն , Վսեմաւիայլ Պէյ , քանի որ անկարելի է գոցուիլ , կը խնդրեմ Ձեր Վսեմութեանէն որ միամիտ ընէք զիս , թէ կրնաք կատարեալ խօսք տալ իմ իրաւունքներս պաշտպանելու , որ վստահ ըլլամ տէր և պաշտպան ունենալուս : Եթէ ինչպէս որ պարտաւոր էք , կըրնաք զիս ամեն կողմէն ապահովել , կը դառնամ իմ վանքս միամտաբար ազօթելու բոլոր միաբանութեամբս Բարեխնամ թագաւորիս կենացը համար , ինչպէս որ պարտաւոր եմք միշտ . իսկ եթէ չէք կարեր վստահացնել զիս , պէտք է որ ըսէք ինձ յայտնապէս . որպէս զի ըստ այնմ ես ալ ջանամ միջոց մի գտնել իմ ազգային վանքիս պատիւը պահպանելու , որու

դէմ եղած անպատուութիւնը Տէրութեան կը վերաբերի :

«Աստի համառօտելով կ'ըսեմ՝ Ձեր Ասեմութեան կամ միամտեցուցէք զիս օրինաւոր կերպիւ պաշտպանելուդ , և կամ հրաման ըրէք որ վանքիս դուռը գոցեմ երբ անկարող տեսնեմ զիս | առիւնաց յարձակմանը դէմ դնելու : Բայց այս ալ գիտցէք որ թէ՛ Ձեր հրամանաւ գոցելու ըլլամ , և թէ՛ ես անձամբ ստիպուիմ գոցելու , հետեւեալ օրը , պիտի պարտաւորուիմ , Ալքսեմ : Պէյ , բողբեղ ձեզ համար առ ի . Դուռը , ըսելով թէ՛ ազգային իրաւունքս պաշտպանելու մասին չեզոք մնալով , և ես ընդհանուր ազգիս և Բարեխնամ Տէրութեանս պատիւը պահպանելու համար ստիպուեցայ վանքիս դուռը գոցել . ասկէ պիտի գուշակուի որ դուք | առիւնաց ակնառութիւն ըրած էք , և հետեւապէս պատասխանատուութեան ներքեւ կը համարիք Տէրութեան առջեւ : —

Պատասխանեց Ն . Ասեմութիւնը . « Եւ չեմ կրնար հրաման տալ ձեզ որ վանքիդ դուռը գոցես , բայց չեմ ալ ստիպեր ըսելով թէ՛ անպատճառ բաց պիտի պահես դուռը , այդ ձեր կամքէն կախեալ է : Եւ՝ դիտէք որ նոր եկած ըլլալով , տեղւոյս քաղաքական սովորութեան և անցքերուն վրայօք կատարեալ տեղեկութիւն չունիմ : Եւ թէ՛ ձեր և այլոց ոմանց խօսքին նայիմ՝ ստոյգ է որ | առիւնք ընդդէմ Տէրութեան կամաց և կանոնին դձեզ կը նեղացնեն եղբր , ձեր իրաւունքը բռնադրօսելով , ինչպէս անցեալ օր ալ յիշեցի . բայց և այնպէս՝ ես քանի որ եկած եմ , այդպիսի բան մը պատահած չէ , և չեմ ալ յուսար որ պատահի այդպիսի անիրաւութիւն մի : Իսկ իմ անձիս գալով , ես պարտաւոր եմ իմ Տէրութեանս բոլոր հպատակաց

իրաւանցը հսկելու , եւս առաւել Հայոց ազգին՝ որչափ որ կարելի է , որպէս զի իրարու իրաւանց մնաս չը տրուի և խռովութիւն միջագի . այս է իմ պաշտօնս և պարտքս : Բայց այս դէպքիս մէջ դուք ալ պէտք չէ որ անտարբեր մնաք , պէտք է արթուն կենաք որ ձեր միաբանութեան մէջէն ալ տմարդութեամբ կամ տգիտութեամբ գրգռութեան պատճառ չը տան , որու առջեւն առնելը դժուար կ'ըլլայ և դուք ալ պատասխանատու կը մնաք : Սոյն պատուէրը պիտի ընեմ նաեւ | առիւնաց միաբանութեւ :

« Ենք մեր վանքին դուռը , ըսաւ Ն . Ա . մինչեւ ցարդ գոցած չեմք և Լստուծով չենք գոցեր շնորհիւ մեծազօր Տէրութեան : Սակայն մեծ ցաւ զգացի , Ալքսեմ . Պէյ , որ դժուարութիւն յայտնեցիք | առիւնաց մինչեւ ցայսօր մեր իրաւանց տուած վընասներուն հաւատալ , անկարելի համարելով որ | առիւնք Տէրութեան կամաց և կանոնին հակառակ մեր սեփականութեանց դէմ շարժած ըլլան . հոգ չէ , ազատ էք հաւատալու կամ ոչ , բայց ես ալ կ'ըսեմ ձեզ , թէ՛ ապան կամ անապան ոլիտի տեսնէք քանի որ հոս էք , | առիւնաց շնորհքը , զոր չափիտի ուշանան ցոյց տալու իրենց ծանուցեալ փարմունքովը , և թերեւս մեր ըսածները սուտ չհանելու , և կամ Ձեր Ասեմութեան զօրութիւնը փորձելու համար ստիպուին տեսարան մը բանալու . այս գուշակութիւնս պարտաւոր մի համարիք . կէտ մի դրէք հոն :

Իսկ Հայոց միաբանութեան գալով վստահ եղիք որ ամենեւին անկարգութեան մի պատճառ չտրուիր . երաշխաւոր եմ բոլոր միաբանութեանս և ժողովրդոցս , ես աշխատած եմ և պիտի աշխատիմ որ բոլոր

վանքերուս և քաղաքիս ժողովուրդ-
ները հնազանդութեան մէջ պա-
հեմ և Տէրութեանս կտմբն ու հրա-
մանները յարգել տամ։ Եւ տի յիշեցը-
նելով Չեր Վ սեմութեան մեր գալու-
տեան բուն նպատակը, Չեր հսկա-
ղութեան կը յանձնեմ Վտր-Վագուպ
վանքը, և ես կը փութամ երթալ և
ինձ պատկանեալ զգուշութիւնները
ձեռք առնուլ։ Եւ Եւ բաժնուեցաւ
Ն. Վ սեմութեան քովէն։

Վանի որ ժամանակն ու ժամերը
կը մօտենային, երկու կողմէն ալ մտա-
տանջութիւնները կ'աւելնային. Վա-
տինք՝ իրենց սեփականութիւն հա-
մարած իրաւունք մի կորստուցընելու
երկիւղը կը տագնապէր. իսկ Հայք
վտանգաւոր թշնամիի մի ճանկէն ընդ-
միջոտ աղատուելու կասկածանօք ու-
րախութեան և երկիւղի մէջ կը տա-
տանէին։ Եւ Վ սեմափայլ Պէյը իւր
կողմէն երկու վանուց վրայ եւս ՚ի
հեռուստ գիտելով կը հսկէր արթ-
նութեամբ, սրպէս զի շուկի մի ձայ-
նը լսելուն արծուի նման սրանայ. կը
տեսնէր նա որ Հայոց միաբանութիւն
մէկ կողմէն իւր իրաւունքը պաշտ-
պանելու համար սրտապնդեալ, բայց
միանգամայն՝ ինչպէս կը վայելէ իւր
վկայեալ հաւատարմութեանը և ազ-
նիւ բնաւորութեանը, ամենայն հան-
դարտութեամբ կը սպասէր իրոց վտի-
ռանին՝ մեծազօր Տէրութեան աշխոյժ
ու խոհեմ պաշտօնէին խնամօքը վրա-
տահանալով։ Իսկ ընդհակառակը Վա-
տին միաբանութեան մէջ իրարան-
ցում մի կը դիտէ նա, լսելեայն եր-
թեւեկութիւն մի պակաս չէր անոնց
մէջ, և որքան որ բռնութիւն ՚ի գործ
գնելու սրահ մի տրամադիր եղած է
ինայտու ամենայնիւ Սութասարբուք
Պէյին արթուն հսկողութիւնը տես-
նելով՝ իրենց զօրութեանը դէմ կը

զարնուէին, ինչպէս արեւ մի որ իւր վը-
րայ դառնալով կը փշուրի։ Եւ ոչ
այոյժով միայն, այլ և կը դանգատին
Վ սեմափայլ Պէյէն որ իրենց չէր նե-
րեր գործադրել ինչ որ կը պահանջե-
ին և Հայոց իրաւունքը աւելի կը
յարգուէր։

Վյոպէս ուրեմն երրորդ անգամի
փորձն ալ ապարդիւն մնաց Վատինաց
կողմէն. Հայք յաղթանակեցին ողոր-
մութեամբն Վստուծոյ և Հնորհիւ մե-
ծազօր Տէրութեան. անցաւ Յուլիսի
13րդ օրն ալ ներկայ տարւոյն առանց
խռովութեան. և իմացաւ Հայոց մի-
աբանութիւնը և բոլոր ազգը բարե-
խնամ Վայսեր հպատակ ըլլալը և անոր
արժանիքը։ Վյս առանց արտաքին
խռովութեան անցաւ, բայց ոչ ա-
ռանց մտատանջութեւ, սրտերը դեռ
կը յուզուին երկուստեք, բայց յոյս
ունիմք որ ազգաց իրաւունքը և ար-
դարութիւնը վերջապէս պիտի յաղ-
թէ միջնորդութեամբ Քարճրապա-
տիւ և արդարակորով նորոնտիր փոխ-
որքային, զոր պահեսցէ Տէր յամայր
սմն ՚ի պատիւ մեծազօր Օսմանեան
Տէրութեան և ՚ի պարծանս անուան
Ն. Վ. Վայսեր։

Թէպէտ և Յուլիսի 13րդ օր անցաւ
ըսինք խաղաղութեամբ, սակայն 14րդ
օրը լուսնալու գիշերը ուրիշ տեսա-
րան մի կը բացուէր Վէթէէ մի մէջ։
Վատինք չուղեցին բոլորովին ընկճեալ
մնալ, լաւ առիթ համարեցին հին խոր-
հուրդ մի զոր մի քանի անգամ ջանա-
ցեր էին ՚ի գործ գնել և չէին յաջո-
ղած, այս անգամ ամենայն փութով
և գիշերային պատրաստութեամբք ՚ի
գլուխ հանեցին։ Վյս ալ անիրաւի
յափշտակութիւն մի էր, ոչ միայն
Հայոց ազգին իրաւանց, այլ ընդհա-
նուր քրիստոնէութեւ։ Վյս է Վէթ-
էէ մի Վառանից այրին սեփականու-

Թիւնը, Սոյն Այլը որ բոլոր քրիստոնէից կը վերաբերի և ուռանց պահպանութեան բայ կը մնար միշտ, նոյն գիշերը աճապարանօք և զարմանալի փութով պարսպի մէջ առին դուռը հակառակ Տէրութեան հրամանին, որ քանի մի անքամ քակել տուած էր և դարձեալ նոր հրաման ալ եկած էր որ քակուի, զոր Վրանչիականք իրենց սեփականելու համար պատ հիւսել կ'ուզէին: Հինուածքը զարմանալի էր, ըստ որում սրբատաշ քարերը կանխաւ պատրաստեր և վրանին թուռ նշաններով նշանակած էին, այնպէս որ կարծես թէ քանի մի տարիէ 'ի վեր է շէնքը: Հետեւեալ օրը թէպէտ և լուր տրուեցաւ Հայոց և Յունաց Պատրիարքաց և Կառավարութիւնը փութաց երթալ և քննութե առնուլ շէնքը, այսու ամենայնիւ մինչև ցայսօր դեռ կը մնայ յիշեալ Այլը Վրանչիականց հսկողութեանը տակ 'ի մնաս իրաւանց ընդհանուր քրիստոնէից: Հոս լրացաւ Սրբազան Պատրիարքի գուշակութիւնը զոր ըրած էր քանի մի օր յառաջ Վսեմ, Սութասարութի Պէյին, ինչպէս վերը յիշեցինք, ըսելով թէ՝ «Քանի որ հոս էք, ագան կամ անագան՝ Ետինք իմ ըսածներս սուտ չհանելու համար իրենց շնորհքը ցոյց պիտի տան. » այսինքն այլոց սեփականութեանց մնաս հասցընելու փորձ պիտի փորձեն, եւ խռովութեանց պատճառներ պիտի տան:

Այս է աւատիկ Սուրբ Տեղեացս ինքրոյն մանրամասն ծանօթութիւնները զոր 'ի անդեկութիւն ընդհանուր հասարակութեան և ազգաց, և 'ի գիտութիւն և 'ի զգուշութիւն սպառաշիյ 'ի գիր արձանացուցաք:

ՇԻՒՆՆԻ ԲԱՆՏԱՐԿԵԱՒԸ

(Շարունակութիւն և վերջ, տես Թիւ 10)

Թ.

Ինչ որ պատահեցաւ ինծի այն առտեն, լաւ մը չեմ գիտեր, — ոչ ալ երբէք գիտցած եմ. նախ և առաջ լուսոյն և օգոյն և յետոյ ալ խաւարին տպաւորութիւնը կորսնցուցի. ոչ խորհրդածութիւն ունէի, ոչ զգացում — ոչ ինչ — քարի մը պէս էի այս քարերուս մէջ. կ'աճէի այնպէս անշարժ՝ ինչպէս մուշուկ շրջապատեալ անբեր քարաժայռ: Ինձ համար առմենայն ինչ դատարկ էր, ամենայն ինչ ցուրտ էր, ամենայն ինչ դժգոյն էր. ոչ գիշեր էր և ոչ ցերեկ. նոյն իսկ իմ խոնջեալ աչքերուս այնչափ անտանելի եղող բանտին լոյսն ալ չէր, այլ այնպիսի դատարկութիւն մը, որ կրնար իսկ զմիջոցը պարունակել, անշարժութիւն մ'էր — առանց հաստատուն կայանի մը: Ինծի համար ոչ աստղ կար, — ոչ երկիր, — ոչ ժամանակ, — ոչ պարտականութիւն, — ոչ փոփոխութիւն, — ոչ առաքինութիւն, — ոչ եղեռն, — բայց միայն լուութիւն և անձայն շնչառութիւն մը, որ ոչ կենաց կը նմանէր և ոչ մահուան. հանդարտ, լճացեալ ծով մը, ծով մը նսեմ, անսահման, անձայն և անշարժ:

Ժ.

Նշող մը թափանցեց ուղեղիս. — Թռչնոյ մը դայլայլիկն էր ասի. դադրեցաւ, յետոյ դարձեալ սկսեց, երբէք ականջ մը այսչափ գողտրիկ երգ լսած չունի. իմ երախտագէտ եղաւ անոր: Հայեացքս յապուշկրթած զմայլելով

շուրջն թափառեցան, և վայրկեան մը
թշուառութիւնս չտեսան: Բայց տա-
կաւ առ տակաւ իրենց սովորական
ընթացքը ձեռք առին, տեսայ որ բան-
տիս սալայատակը և որմերը առաջուան
պէս փակուեցան դարձեալ վրայէս,
տեսայ արեւուն շիջելափառ շառա-
ւիղը որ կը սողոսկէր ինչպէս սողոս-
կած էր մինչեւ այն տոտեն. բայց այն
ճեղքուածքին մէջ, ուսկից ճառա-
գայթը կուգար, թառած էր այն թռ-
չունը այնչափ զուարթ, այնչափ ըն-
տանի կերպով մը և թերեւս աւելի
իսկ քան թէ ծառի մը վրայ թառած
ըլլար: Սբանջելի թռչուն մ'էր ասի
կապոյտ թեւերով, և անանկ կը գեղ-
գեղէր որ հաղարաւոր խօսքեր կ'ըսէր
գոգցես և ամենքն ալ ինձ համար:
Բնաւ ասոր նման թռչուն մը ոչ տե-
սած եմ և ոչ ալ պիտի տեսնամ: Ին-
ծի պէս կ'երեւար թէ նա ալ ընկերոջ
մը պէտք ունէր. բայց ինծի չափ
թախճեալ չէր, և եկած էր զիս սի-
րել այն ատեն որ աշխարհի մէջ ոչ որ
կարող էր սիրել զիս. եկած էր արգե-
լանիս եղբորը զիս սփոփելու և ի ըզ-
գացումն և ի խորհրդածութիւն վե-
րակոչելու համար: Չեմ գիտեր թէ
ազատ էր, եթէ իր վանդակը թողած
էր իմինիս մէջ թառելու համար. բայց
ես գերութեան ճաշակը բաւական
առած էի, գեղեցիկ թռչուն, որպէս
զի քուկինիդ փափաքէի: Չեմ գիտեր
թէ դրախտին բնակիչներէն մէկն էր
որ այս թեւաւոր կերպարանքիս տակ
զիս տեսնել կուգար: Ասան զի-թող
ներէ երկինք իմ այս խորհուրդս, որ
ինծի միանգամայն արտասուել եւ
ժպտել տուաւ, շատ անգամ այնպէս
երեւակայած եմ որ եղբօրս հոգին էր
այն որ ինծի այցելութեան եկած էր,
Բայց վերջապէս թուաւ գնայ—և այն
ատեն հասկցայ թէ մահկանացու էր

— եթէ այնպէս չըլլար, զիս կրկնակի
միայնակ թողլով չէր մեկնէր. — միայ-
նակ, ինչպէս դիակը դադարէ ծած-
կոյթին տակ. — միայնակ պայծառ օր
մը երկնից երեսը կղզիայեալ ամպի
մը պէս, երբ հաստատութեան միւս
մասերուն մէջ կը փայլի անբիծ կա-
պոյտ մը տեսակ մը անտեղի սպառնա-
լիք մթնոլորտին մէջ առկախեալ մինչ
դեռ երկինքը կապոյտ է և երկիրը
գեղածիծաղ:

ԺԱ.

Տեսակ մը փոփոխութիւն տեղի
ունեցաւ առօրեայ վիճակիս մէջ:

Պահապաններս աւելի կարեկից
եղան ինձ, չեմ գիտեր ինչո՞ւ համար,
ցաւոց և վշտոց տեսարանին սովորած
էին. բայց բան մընէր եղաւ: Իմ կու-
տորտած շղթայիս օղակները նորէն
չանցուցին և ես ազատութիւն ունե-
ցայ բանտիս շուրջը դառնալու նախ
լայնութեանը, յետոյ երկայնութեա-
նը և ապա ամեն կողմ շրջագայելու.
այս կերպով իւրաքանչիւր մոյթին
շուրջը դարձայ, շրջագայութիւնս
ձեռք առնելով ուսկից որ սկսած էի.
բայց մեծ խնամք տանելով որ չըլլայ
թէ եղբարցս գերեզմաններուն վրայ
կոխեմ, որոց տեղը և ոչ մէկ հողա-
կոյտով մը յայտնի չէր: Եթէ պատա-
հէր որ դիպուածով քայլերս պղծէին
նոցա խոնարհ դամբանը, շնորհա-
թիւնս կը դժուարանար, կը ճնշուէր
և սիրտս նուազել կղգայի:

ԺԲ.

Արմին մէջ ոտքի տեղուանք փո-
րեցի, ոչ եթէ բանտէն խոյս տալու
նպատակաւ, վասն զի հողը կը բռ-

վանդակէր բոլոր անոնք որ մարդկային կերպարանքի տակ զիս սիրած էին, ոչ, անկէ ետեւ երկրագունդս ուրիշ բան չպիտի բլլար ինծի համար բայց եթէ աւելի ընդարձակ բանտ մը : Այլ զաւակ ունէի, — ոչ հայր, — ոչ ազգական, — ոչ ալ թշուառութեւններ : Այս գաղափարս մասնաւորապէս ինծի հաճոյք պատճառեց . վասն զի անսոց վրայ մտածելը միայն կրնար զիս յիմարեցնել : Սակայն հետաքրքրութիւն ունեցայ պատուհանիս վանդակասիւններուն վրայ ելնելու և անգամ մ'ալ բարձրաբերձ լերանց վերայ անդորր և զմայլեալ ակնարկ մը հանգչեցընելու :

Ժ Գ .

Տեսայ զանոնք, — մի և նոյնն էին, ինձ նման այլափոխեալ չէին : Իրենց ալեւոր գտգտածան վրայ տեսայ իրենց ձիւնեղէն հազարաւոր տարիքնին, իրենց ստորոտը անհուն լիճը և կապուտակ ալեօք արագափայլն Հռոգանոս . լսեցի հեղեղներուն իրենց ժայռեայ յատակներուն վրայ և բեկբեկ մացառներու մէջտեղէն սասնուլն ու կարկաջելը . տեսայ հեռուէն սպիտակ պատուարներով զարդարուած քաղաքին փայլիլը, և աւելի սպիտակ առագաստներու ջուրին երեսէն սահիլ գնալը : Այնպէս ինքն փոքր կըլլէր մը որ գոգցեալ կը ժպտէր ինձ . լըճին մէջտեղ երեւցած միմիայն կղզին : Դալարազուարճ փոքր կղզեակ մ'էր ասի, որ կ'երեւար թէ բանտիս մակերեւութէն աւելի տարածութիւն չունէր . բայց մէջտեղը երեք հատ մեծամեծ ծառեր կային, լերանց սիւքը վրայէն շնչելով կ'անցնէր և իւր շուրջը վճիտ և ջինջ ջուրերը սաղասպա-

ճեմ կը վաղէին, սիրուն տեսքով երփնեւանդ և անուշաբոյր ծաղիկներ կ'աճէին հոն : Ձկները գղեակին սրտառարներուն երկայնութեանը կը լողային և ամենքն ալ կայտառ և ուրախ կը թուէին : Մտածին հիւսիսին թեւերուն վրայ տարուած կը սլանար արծիւը . ինծի անանկ եկաւ թէ երբէք անոր այնքան սրաբշաւ ճախրելը ընթանալը տեսած չէի, և այն աւտենը նորանոր արտասուք արտեալ նունքս թրջեցին, և օխտս առկնուվրայ եղաւ : — Օղջացի չղթայս թող տալու համար, և երբ վար իջայ, մուսկապատ օթեւանիս մթութիւնը ծանր բեռան մը նման նորէն վրաս ինկաւ, նման դեռ նոր փորուած գերեզմանի մը, որ կը գոցուի անոր վրայ դոր ազատել կ'ուզէինք, — և սակայն իմ խոնքեալ աչքերս այսպիսի հանգստեան մը պէտք ունէին :

Ժ Դ .

Սամանակը սահեցաւ . ամիսներ, տարիներ անցան, եթէ օրեր, չեմ գիտեր, — հաշիւ չէի բռներ . բնաւ ալ յոյս չունէի որ աչքերս նորէն լոյս պիտի տեսնային կամ զիրենք ծածկող խաւարը երբէք պիտի փարատէր : Այլ երջապէս մէկ քանի մարդիկ գալով զիս բանտէս արձակեցին, չհարցուցի իրենց թէ ինչու համար այս բանս կ'ընէին, ոչ ալ փոյթ բրի իմանալու թէ ուր պիտի տանէին զիս : Ազատ ըլլալ կամ գերի, ալ ինծի համար տարբերութիւն չունէր, յուսահատութիւնը սիրել սովորած էի : Աւստի երբ այս մարդիկը ներս մտնելով գերութեանս վերջ տուին, արդէն այն թանձր որմերը ինձ համար տեսակ մը ճգնտրան դարձած էին . իրերեւ իմ

ստացուածքս կը նկատէի զանոնք: Վրէ-
րեթէ այնպէս թուեցաւ ինծի թէ
եկած էին երկրորդ անգամ զիս հայ-
րենի երգէս խել: Սարգերու հետ
բարեկամութիւն հաստատած էի .
աչքովս նոցա լինն աշխատութեանը
կը հետեւէի. կը սիրէի մկանց լուսնի
լուսով խաղալին տեսնել. և ինչո՞ւ
այս կենդանիներէս նուազ զգայուն
ըլլայի, մի և նոյն օթեւանին մէջ կը
բնակէինք. և ես, ամենուն ալ թա-
գաւորը՝ կենաց և մահու իշխանու-
թիւնն ունէի. — և սակայն, զարմա-
նալի բան, ամենքնիս ալ վարժուած
էինք խաղաղութեամբ ապրելու միա-
տեղ: — Շղթայքս և ես, բարեկամ
եղած էինք իրարու, ահա երկար հա-
ղորդակցութիւն մը այսչափ կը նը-
պաստէ զմեզ՝ մեր ներկայ վիճակին
մէջ դնելու. նոյն իսկ ես հառաչե-
լով տեսայ թէ ազատ էի:

Ի չրք Պայրն .
Թարգ .
Նշան Ճիւղնեան :

ՍԵՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Սարգիսային ընկերութիւնը կը պա-
հանջէ, որ սիրենք այն երկիրը, ուր
մէկ տեղ կը բնակինք, որ իբրեւ հա-
սարակաց դայեակ և մայր կը համա-
րուի և որով ամենքը կը կապակցուին
և անկէ յառաջ կուգայ միութիւնը:
Եւ իսկ է որ Լատինները կ'անուա-
նեն canitas patrii soli, «եր երկրի հայ-
րենայ. և զանի կը համարեն մարդկան
մէջ իբրեւ յօդակապ մը: Երգարեւ մար-
դիկները կը դգան, թէ զօրաւոր բան
մը զիրենք կը կապէ, երբ կը խորհին

թէ նոյն երկիրը, որ զիրենք կը կրէ
և կը սնուցանէ, քանի որ կենդանի են՝
զիրենք պիտի ընդունի իւր ծոցը, երբ
մեռնին» «Վո բնակութիւնը իմա ալ
պիտի ըլլայ, քո ժողովուրդդ իմ ժո-
ղովուրդս, կ'ըսէր Հռութ իր Նէե-
մի սկեսրոջ. ես ալ մեռնիմ այն եր-
կրին մէջ, ուր դու պիտի թաղուիս,
և հոն ընտրեմ ինձի գերեզման:»

Յովսէփ մեռնելու ատենը ըսաւ
իր եղբարց. «Եստուած այց արասցէ
Ձեզ և հաստատեսցէ զձեզ յերկրին՝
զոր խոստացաւ հարցն մերոց, տարայք
և զիմ ոսկերս ընդ ձեզ:» Եւ եղաւ
իր վերջին խօսքը: «Բաղարութիւն մ'
էր յուսուք հոգին աւանդելու մի-
ջոցին, որ իր եղբարց հետեւի գէպ 'ի
այն երկիրը, զոր Եստուած անոնց
կուտար իբր հայրենիք, և թէ իւր ոս-
կերքը հոն խաղաղութեամբ կը հանգ-
չին իր քաղաքակցաց մէջ:

Եւս բնական զգացում մ'է ա-
մեն ժողովուրդոց: Թէ միատոկէս Եթե-
նացին պստրւած էր իբրեւ մատնիչ հայ-
րենեաց, և անձնատուր եղած էր Պարսից
թագաւորին, որուն հետ իր հայրենեա-
ցը կորուստ կը նիւթէր. սակայն մեռ-
նելու ատեն մոռցաւ Սակնէ զին քա-
ղաքը, զոր թագաւորը իրեն տուած
էր, թէպէտ և հոն շատ պատիւ գը-
տած էր: Պատուիրեց իւր ընկերներուն
Եստիկէ տանիլ իր ոսկերքը դադանի
թաղելու համար, այն պատճառաւ
որ ժողովրդական հրովարտակի խըս-
տութիւնը չէր ներեր ուրիշ կերպով
ընել: Սահուան մօտեցած ժամանա-
կը, երբ ուղիղ բանականութիւնը կը
վերադառնայ և վրէժխնդրութիւնը
կը դադրի, հայրենեաց ոէրը կ'աբ-
թընայ, ինքը կը կարծէ թէ իր հայրե-
նեաց փոխարինութիւն մը կ'ընէ. կը
համարի թէ յետ մահուան իր ար-
տորը յետս կոչուած կ'ըլլայ, և թէ՛

(ինչպէս այն ատեն կ'ըսէին) հողը աւելի հեշտ և մեղմ կ'ըլլայ իր ոսկերաց վրայ :

Եւոր համար բարի քաղաքացիները իրենց ծննդական երկրին հետ սիրով կը միանան : «Թագաւորին առջեւ լինէի, կ'ըսէր Աէէմի, և բաժակ կը մատուցանէի անոր, և ես տրոտում կ'երեւէի անոր աչացը . Թագաւորը ինձի լաւաւ-ինչու քու երեսդ տխուր է, քանի որ հիւանդ ալ չես . և ես ըսի Թագաւորին, Ինչպէս կարելի է որ տխրագէմ չըլլամ, մինչդեռ իմ հարցըս գերեզմանի քաղաքը անապատ դարձած է, և անոր դռները այրուած . եթէ կ'ուզես շնորհք մը ընել ինձի, ղըկէ ղիս Յուդայի երկիրը, ուր է հօրս գերեզմանը, և ես զայն վերստին շինեմ» :

Աէէմի Յուդայի երկիրը հասնելով, կանչեց իր քաղաքակիցները, որ հասարակաց հայրենեաց սիրով միացեալ էին և ըսաւ. «Եւրդ գիտէք մեր վիշտը, Լըուսաղէմը անապատ դարձած է, և անոր դռները հրձիգ եղած . եկէք միասնաբար և զանի վերստին կանգնենք» : Բանի որ Հրէաները օտար երկիրներու մէջ բնակեցան, այնչափ հեռի իրենց Հայրենիքէն, չը դադարեցան դառն արտասուներէր թափելէ, որով կըստուարացնէին կարծես թէ Բաբելոնի գետերը յիշատակաւ Սիւնի : Չէին համարձակեր երգել օտար երկրի մէջ իրենց քաղցրանուագ երգելը, որ Տիրոջ օրհնութիւններն էին : Իրենց նուագարանները, որ երբեմն միսթարութիւն եւ ուրախութիւն էին, գետին եզերքը տընկուած ուռնիներէն առ կախ կը կենային, և նուագելու արուեստն ալ մոռցեր էին . «Ով Լըուսաղէմ, կ'ըսէին, թող ղիս մոռնամ, եթէ երբեք զբեղ մոռնամ» : Եւոր, զորս յաղթողները

իրենց հայրենեաց հողին վրայ թողած էին, աւելի երջանիկ կը համարէին իրենց անձը այն Սաղմոսներով, զորս գերութեան միջոցին կը նուագէին . «Այժմ ամենակէ, ով Տէր, որ ողորմիս Սիւնի» : Բաւ ծառաներդ կը սիրեն անոր աւերակներն ու քանդեալ քարերն անգամ, և իրենց ծննդեան երկիրը՝ թէպէտ և տառապեալ, կը գրաւէ տակաւին իրենց սէրը և գորովանքը :

ՊՕՍՈՒԷ

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Պօլեւ. Լա Լ. Լ. — Չեր նամակաւ կը ծանուցանէք Սէցի Սիսթար վարդապետի գալուստն ՚ի Պօլեւ և կը յաւելուք թէ՛ աւելի լաւ է՞ր լինիր, որ Սիւն յիշեալ վարդապետի Լըուսաղէմէն ելնելու պարագաները մի առ մի հրատարակէր, որպէս ղի տաւրակարծիք տարածայնութեանց տեղի չըմնար :

Իրաւունք ունիք, յեծարգոյ բարեկամ, բայց ով կը մտածէր՝ թէ Սիսթար, իւր անխոհեմ վարմունքով վերստին տեղի պիտի տայ տարածայնութեանց : Սիսթար վարդապետն, մօտ տարի ու կէս ժամանակ վանուցըս մէջ մնալով, շարունակ կը թախանձէր՝ թէ՛ զՊատրիարք Հայրն և թէ՛ զայլ, որպէս ղի միջնորդեն առ Ս. Պատրիարքն Կ. Պօլսոյ՝ ներողութեամբ ղինքն ՚ի Տարօն դարձնելու : Գլխաւորապէս կ'առարկէր նա՛ թէ ինքն սովորով տուած դրամներ և հոգաբարձական եկամուտներ ունի Տա-

րօնոյ վիճակին մէջ, որոնք իւր բա-
ցակայութեան պատճառաւ անհա-
ւաք մնալով ինքն կը վնասի նիւթա-
պէս, ուստի և կը խնդրէր կերպով
մի գէթ Սակաբայեցւոց վանքն դառ-
նալ, (որ իւր աքսորանաց համար ա-
ռաջին անգամ որոշուած տեղին էր) և
կրէր թէ՛ այն տեղէն գիւրին է իւր
նիւթական վնասուց առաջն առնուլ,
ըստ որում յիշեալ վանքն կից է Սշոյ
վիճակին, իսկ խնդրանաց հիման վրայ՝
Ս. Լ. Թոռոյս Սրբազան Եպիսկոպոս
միջնորդած էր առ Ս. Պատրիարքն Կ.
Պօլսոյ և նա իւր բնասուր ներողա-
մտութեամբ հաճութիւն տուած էր
Սակաբայեցւոց վանքը երթալու հա-
մար, ուր եթէ առաջին անգամ համ-
բերելով մնացած լինէր Սիսիթար վար-
դապետն, բնաւ երբէք տեղի պիտի
չունենային այն անսխորժ վրդովմունք-
ներն, որոնք երկու տարի առաջ յու-
զեցան Պօլսոյ մէջ իւր անխոհմու-
թեան առթիւ, և աւելի ծանրացու-
ցին խնդիրը, քան թէ օգուտ գոր-
ծեցին իւր անձին :

Ըրդ, Սեծարգոյ Բարեկամ, Սը-
խիթար վարդապետն, իւր բազմա-
ղերս թախանձանքներով և միջնոր-
դութեամբ Ս. Լ. Թոռոյս Պատրիարք
Հօր, հաճութիւն ստացաւ ուղղակի
Սակաբայեցւոց վանքը երթալու, և
այս մասին յատուկ վկայագիր եւս
տրուեցաւ իրեն : Ո՛վ կը կարծէր,
թէ յիշեալ վարդապետի թախան-
ձանքները լոկ պատրուակներ էին եր-
կու Սրբազան Պատրիարքաց բարեմը
տութիւնը և ներողամտութիւնը պատ-
րելու համար : Սիսիթար վարդապե-
տն, երբ Սեպ. 21 ին ճանապարհ
ելաւ Ս. Լ. Թոռէս, ամեն մարդ այն-
պէս գիտէր և այնպէս համոզուած
էր, թէ ուղղակի Սակաբայեցւոց
վանքը պիտի երթայ, և մինչեւ ան-

գամ Սշեցի անտերունչ պատանեակ
մի եւս յանձնուեցաւ իրեն, որ տա-
նի իւր ազգականներուն յանձնէ .
սակայն յիշեալ վարդապետն այժմ
Պօլսոյ եկած է : Ո՛վ է յանցաւորն, ե-
թէ ոչ դարձեալ ինքն, որ իրեն հա-
մար եղած բարերարութիւնն անգամ
իւր երազական և սպառիք դիտաւո-
րութեանց կը զոհէ :

— Լ. Կ. Ե. — ՍԻՕՆԻ նախորդ թը-
ւով հրատարակուած « Լ. — Երազայոյն
Լրջւոյն » յօդուածը կարգալով բարե-
հաճած էք Ձեր պատուական գրու-
թիւնը առ մեզ ուղղել, որով կը յոր-
դորէք խաղաղասիրական ոգւով վարիլ
Լեզիպոսական խնդրոյն մէջ և չլլրա-
ւորել բնաւ Սեծ. Եպիսկոպոս եղբարց
անձնասիրութիւնը, որոց բարեկամու-
թենէն աւելի կարող է շահիլ Ս. Լ.
Թոռը, քան թէ հակառակութենէն :

Լրներէք մեզ՝ պատասխանել Ձեզ,
որ Ս. Սիստիս Սիբաանութիւնը ա-
տելով կ'առէ հակառակասիրութիւ-
նը, և Լեզիպոսական խնդրոյ ծագ-
ման առաջին օրէն 'ի վեր ջանացած
է ամեն խաղաղասիրական միջոց ձեռք
առնուլ և իրաւախոհութեամբ վերջ
տալ նոյն խնդրոյն. բայց, դժբաղդա-
բար, ցարդ հասած չէ իւր նպատա-
կին վերջնական կերպիւ : Բաջայայտ
է Ձեզ, որ մի տարիէն աւելի է, որ
ՍԻՕՆ երկու տող գրուած անգամ հը-
րատարած չէ Լեզիպոսական խնդրոյն
նկատմամբ, յուսալով թէ՛ կիրքերը
կը հանդարտին և ամեն գործ խաղա-
ղութեամբ եւ իրաւախոհութեամբ
կ'աւարտի : Բայց այն ևս գիտէք ան-
շուշտ, թէ Լրջւոյն քանի՞ քանի՞ ան-
գամ, ուղղակի և անուղղակի կեր-
պով, յարձակած է համօրէն Սիա-
բանութեանս դէմ, ջանալով միշտ
ղրպարտել և վատահամբաւել իբրեւ
յաւաջատիմ-Լեւոն արգելիլ, իբրեւ առաջ-

հորդոտութեան ինկնածող, իրրեւ անգութ, և այլն և այլն :

Աւստի եթէ ՍԻՕՆ պարտաւորեցաւ Եգիպտական խնդրոյն վրայ խօսիլ, ոչ թէ Յակոբեանց սիրտը վիրաւորելու և հակառակութիւն արծարծելու համար էր, քու լիցի, այլ յատկապէս Արշալուսոյ լեզուաբարութիւնը սանձելու համար, որպէս զի չը համարձակի կարծել թէ Սիւրբանութիւնս փաստ և կարողութիւն չունի իւր երազական դիտողութիւնքը ջրել եւ հերքել : Եթէ Եգիպտական խնդրոյն խորը թափանցենք, ակներեւ կրտսնենք, որ նոյն խնդրոյն տարապայման երկարելոյն և հակառակութեան ենթարկուելոյն պատճառ գլխաւորապէս Արշալուս եղած է, իւր յարձակողական անընդհատ և անփաստ հրատարակութեամբք : Սի թէ չէք նըշմարեր, թէ նոյն իսկ Սեւրոպ եպիսկոպոսի խնդրոյն նկատմամբ, ինչքան անհամբեր է Արշալուս, անհամբեր իրրեւ շփանչն խաբւահիւս, ինչպէս կը յուզի, կը բորբոքի եւ Ազգային Վարչութեան կողմէն տակաւին որոշում մի չեղած, ինքն շարունակ կը քննադատայ, կը սպառնայ և դիտողութիւններ կը հրատարակէ, մերթ Եգիպտահայոց վիճակին կարեկից ձեւանալով, մերթ Սեւրոպ եպիսկոպոսը ներբողական բաւերու կոյտին տակ սքողելով, մերթ Ազգային Վարչու-

թեանը խրատներ տալով, մերթ Աստուածատուը վարդապետը դատապարտելով, և այլն և այլն :

Ինչ է Արշալուսոյ այս տապնապը և անհանգստութիւնը, եթէ ոչ անխոհեմ ընթացք մի, որով փափաքելով աւելի հաւատարիմ ծառայութի մատուցանել Սեւ. Յակոբեանց և Սեւ. րոպ եպիսկոպոսին, աւելի կ'աղարտէ նոցա անունը և պատիւը : Թող լռէ Արշալուս, իսկ ՍԻՕՆ, արդէն շուրջ մի տարի է, որ լռութիւն կը յարդէ :

Ի վերջ բանիս, կը հաւատացնենք Ձեզ, որ ինչպէս Գուք և Ձեզ հետ շատերը, նոյնպէս և յաւէտ Սիւրբանութիւնս, ոչ միայն սիրոյ և խաղաղութեան կը փափաքի, այլ և իրեն նուիրական պարտք կը ճանաչէ այլոց եւս քարոզել և ուսուցանելն : Սակայն գիտէք արդեօք, որ խաղաղութիւնը արդարութեան ծնունդն է, և առաջնոյն թափաւորութիւնը՝ երկրորդին վրայ կը հաստատուի թող յարգուի և սիրուի արդարութիւնը, և ահա խաղաղութիւնն կը թափաւորէ ինքնին :

Յուսալով որ, թէ Գուք և թէ Ձեզ հետ ամեն խաղաղութեան փափաքողներ կը համողուիք մեր համառօտ պատասխանադրութենէն, բարւոք համարեցինք տպագրութեամբ հրատարակել, քան թէ մանաւորապէս առ Ձեզ միայն ուղղել :

ՑԱՆԿ

ՆՈՅՆԵՐԵՐ

ԿՏԱԿԱԳԻՐ ԲԱՐԵՀԱՄԲԱՒ (ՅԱԿՈԲ ԷՖԷՆՏԻ ԱՇԸԳԵԱՆ ԿԵՍԱՐԱՑԻՈՅ .	241
ԽՈՍՏՄՆԱԳԻՐ ԿՏԱԿԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ .	245
ՃՆՈՒ .	247
ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՌՈՂՁՈՒԹԵԱՆ .	248
ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՑ ԽՆԴԻՐԸ .	253
ՇՒԼԼՈՒԻ ԲԱՆՏԱՐԿԵԱԼԸ .	258
ՍԷՐ ՀԱՅՐԵՆԵԱՑ .	261
ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ .	262

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօնը ամսէ ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկէս ութածալ թղթով :
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիտլլի, հանդերձ ճանապարհի ծախքովը կանխիկ վճարելի :
- Գ. Չառ տետրակ առնել աւելողը, պէտք է ամեն մէկ տետրին չորս գա-
հեկան վճարէ :